ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 15 - Լ

«14» 12 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ԹԻՎ 17/587-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ՀՀ) օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 5-Լ հրամանով հաստատված ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության կանոնադրության 22-րդ կետի 8-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) ՀՀ ՆԳՆ ՓԾ բժշկական ապահովման վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 1-ի.

2) ՀՀ ՆԳՆ ՓԾ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 2-ի"

3) ՀՀ ՆԳՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 3-ի"

4) ՀՀ ՆԳՆ ՊԾ ծառայության կազմակերպման վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 4-ի"

5) ՀՀ ՆԳՆ ՊԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (վարչություն) կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 5-ի"

6) ՀՀ ՆԳՆ ՊԾ փրկարարական ուժերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 6-ի"

7) ՀՀ ՆԳՆ ՊԾ քաղաքացիական պաշտպանության վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 7-ի"

8) ՀՀ ՆԳՆ ՊԾ հոգեբանական աջակցության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 8-ի"

9) ՀՀ ՆԳՆ ՊԾ Երևան քաղաքի փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 9-ի"

10) ՀՀ ՆԳՆ ՊԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 10-ի"

11) ՀՀ ՆԳՆ ՊԾ Արարատի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 11-ի"

12) ՀՀ ՆԳՆ ՊԾ Արմավիրի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 12-ի"

13) ՀՀ ՆԳՆ ՊԾ Գեղարքունիքի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 13-ի"

14) ՀՀ ՆԳՆ ՊԾ Լոռու ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 14-ի"

15) ՀՀ ՆԳՆ ՊԾ Կոտայքի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 15-ի"

16) ՀՀ ՆԳՆ ՊԾ Շիրակի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 16-ի"

17) ՀՀ ՆԳՆ ՊԾ Սյունիքի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 17-ի"

18) ՀՀ ՆԳՆ ՊԾ Վայոց ձորի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 18-ի"

19) ՀՀ ՆԳՆ ՊԾ Տավուշի ՄՓՎ կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 19-ի:

2" Ուժը կորցրած ճանաչել Փրկարար ծառայության տնօրենի 2020 թվականի մայիսի 22-ի «Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 17/587-Լ հրամանը:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
14.12.2023թ.

Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ Ե. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայության) բժշկական ապահովման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում կազմակերպում է փրկարարական ծառայողների, նրանց ընտանիքների անդամների, փրկարարական ծառայության կենսաթոշակառուների բժշկական ապահովման գործունեության իրականացումը:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Հանրային ծառայության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1) փրկարարական ծառայողների առողջության պահպանումը և ամրապնդումը.

2) անձնակազմի առողջական վիճակի բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացումը՝ բժշկական հսկողությունը, հիվանդությունների վաղ հայտնաբերումը, ծառայողների ծառայության և կենցաղի պայմանների ուսումնասիրությունը, նրանց առողջության վրա բացասաբար ազդող գործոնների բացահայտումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը:

3) փրկարարական ծառայողների, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև կենսաթոշակառուների արտահիվանդանոցային, հիվանդանոցային բուժման կազմակերպումը.

4) փրկարարական ծառայողների ռազմաբժշկական փորձաքննության իրականացումը.

5) իր իրավասության սահմաններում մասնակցությունը փրկարարական բնագավառի բժշկական ապահովման պետական միասնական քաղաքականության մշակմանը.

6) փրկարարական ծառայողների առաջին օգնության ցուցաբերման մակարդակի բարձրացումը.

7) արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքներում ներգրավված անձանց բժշկական օգնության ցուցաբերումը.

8) արտակարգ իրավիճակներում տուժած բնակչության բժշկական օգնության ցուցաբերումը և տարհանումը.

9) 911 հեռախոսահամարով բնակչությանը բժշկական խորհրդատվության տրամադրումը.

10) իր իրավասությունների շրջանակներում, նորմատիվ իրավական ակտերի, միջազգային ծրագրերի և պայմանագրերի նախագծերի մշակման մասնակցությունը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կատարման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում և իրականացնում է բուժկանխարգելիչ, անհետաձգելի բժշկական օգնություն և մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքներ.

2) մշակում է իրավական ակտերի նախագծեր, մասնակցում է բժշկական ապահովման մասնագիտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակմանը.

3) մշակում է փրկարարական ծառայության, փրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում բժշկական ապահովման արդյունավետ ծրագրեր՝ համակարգելով ու հսկողություն իրականացնելով դրանց կատարման նկատմամբ.

4) մշակում է առաջարկություններ՝ փրկարարների առողջության պահպանման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, կատարում համապատասխան վերլուծություններ և ներկայացնում Տնօրենին, իր իրավասությունների շրջանակներում մասնակցում է Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների մեթոդական օգնության ցուցաբերմանը.

5) կազմակերպում է փրկարարական ծառայողների ամենամյա դիսպանսերիզացիա, հայտնաբերում հիվանդներին, կատարում ռազմաբժշկական փորձաքննություն և սահմանված կարգով ներկայացնում առաջարկություն.

6) մշակում և Տնօրենի հաստատմանն է ներկայացնում փրկարարական ուժերի անձնակազմի առաջին օգնության տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանն ուղղված ուսումնական թեմատիկ պլանները և հսկողություն իրականացնում պարապմունքների արդյունավետ անցկացման ուղղությամբ.

7) Նախարարի, Տնօրենի հանձնարությամբ մասնակցում է միջազգային կոնֆերանսներին և գիտաժողովներին.

8) իր իրավասության սահմաններում մասնակցում է քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, բարձրացված հարցերի լուծմանը.

9) Նախարարի, Տնօրենի (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

10) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և

հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Բուժկանխարգելման բաժին.

2) Անհետաձգելի բժշկական օգնության բաժին:

20. Բուժկանխարգելման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) փրկարարական ծառայողների ռազմաբժշկական փորձաքննության իրականացում.

2) փրկարարական ծառայողների ստացած հիվանդությունների ու վնասվածքների, խեղումների հետևանքների և ծառայության պատճառական կապի որոշում.

3) փրկարարական ծառայողների ամենամյա պարտադիր բժշկական դիսպանսեր հետազոտության իրականացում և նրանց առողջական վիճակի մասին համապատասխան բժշկական եզրակացության տրամադրում.

4) փրկարարական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, փրկարարական ծառայության կենսաթոշակառուների բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպում.

5) արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման ցուցաբերում.

6) արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման նպատակով ընդգրկված անձնակազմի առողջության պահպանում և բժշկական օգնության ու սպասարկման ցուցաբերում.

7) Վարչության ամսական աշխատանքային պլանների մշակում և հաշվետվությունների կազմում ու ներկայացում Վարչության պետին.

8) մասնակցություն միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող համաժողովներին և քննարկումներին, դաշտային վարժանքներին և անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

9) Վարչության տարեկան հիմնական միջոցառումների պլանի մշակում.

10) Վարչության պետի և Վարչության պետի տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

21. Անհետաձգելի բժշկական օգնության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) բժշկական կազմավորումների և փրկարարների առաջին օգնության դասընթացների կազմակերպում և իրականացնում, դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում և մշակում.

2) «INSARAG»-ի արտաքին որակավորումն անցած Հայկական և ՀՀ մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի բժշկական գույքի և սարքավորումների նկատմամբ հսկողության իրականացում.

3) «INSARAG»-ի արտաքին որակավորումն անցած Հայկական թիմի բժշկական ապահովման կազմակերպում.

4) Վարչությունում անհետաձգելի և շտապ բժշկական օգնության շուրջօրյա հերթապահության կազմակերպում.

5) «911» հեռախոսով բնակչությանը բժշկական խորհրդատվության կազմակերպում, արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման ցուցաբերում.

6) արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին ընդգրկված անձնակազմի բժշկական օգնության ու սպասարկման ցուցաբերում.

7) Վարչության ամսական աշխատանքային պլանների մշակում և հաշվետվությունների կազմում ու ներկայացում Վարչության պետին (Վարչության պետի տեղակալին).

8) Վարչության տարեկան հիմնական միջոցառումների պլանի մշակում.

9) մասնակցություն միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող համաժողովներին և քննարկումներին, դաշտային վարժանքներին և անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

10) Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է աղետների ռիսկի նվազեցման, աղետներին պատրաստվածության, արտակարգ իրավիճակների կանխման, կանխարգելման, հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակման ու դրանց կատարման ապահովման, արտակարգ իրավիճակների հիմնահարցերով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման, արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար).

2) կանոնադրությունը հաստատում է Ծառայության տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն).

3) ծառայողները փրկարարական և քաղաքացիական ծառայողներ են:

4. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են Նախարարը, Տնօրենը և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման բնագավառներում միասնական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցություն բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների և կարգերի մշակմանը և դրանց կատարման ապահովմանը.

3) աղետների ռիսկի նվազեցման, աղետներին պատրաստվածության, արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը, դրանց կանխման, կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների կազմակերպում ու մասնակցություն դրանց իրականացմանը.

4) մասնակցություն աղետների ռիսկի նվազեցման, աղետներին պատրաստվածության բարձրացման, արտակարգ իրավիճակներին արձագանքման, կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ծրագրերի, պլանների, մեթոդական ուղեցույցների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը.

5) մասնակցություն տեխնածին վթարների, դրանց սպառնալիքների կանխատեսման, կանխարգելման և հետևանքների վերացման աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը.

6) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում սեմինարների, վարժանքների և ուսումնավարժությունների՝ իր իրավասության սահմաններում կազմակերպումն ու անցկացումը.

7) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում Պաշտպանության նախարարության, Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության հետ փոխգործողությունների պլանների մշակմանը ու այդ պլաններով նախատեսված միջոցառումների կատարմանը.

8) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ծրագրերի, փոխգործողությունների և այլ պլանների մշակմանը, այդ պլաններով ու ծրագրերով նախատեսված միջոցառումների կատարմանը,

9) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունների (պետական կառավարման մարմինների ստորաբաժանումների), ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ փոխգործողության ծրագրերի, պլանների մշակմանը և այդ պլաններով և ծրագրերով նախատեսված միջոցառումների կատարմանը.

10) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի իրավական կարգավորման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավական ակտերի նախագծերի մշակմանը,

11) բնակչության պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման կազմակերպումը.

12) մասնակցություն կառավարման մարմինների պատրաստման և բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ բնակչության պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով.

13) մասնակցություն իր իրավասության շրջանակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման մարմինների գործունեության կազմակերպմանը.

14) ՀՀ տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մասնակցություն արտակարգ իրավիճակների հիմնահարցերով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստմանը և բնակչության ուսուցմանը,

16) մասնակցություն արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության կազմակերպմանը և իրականացմանը.

17) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին.

18) մասնակցություն արտակարգ իրավիճակների բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման բնագավառներում միջազգային համագործակցության կազմակերպմանը և իրականացմանը.

19) մասնակցություն արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և այլ նյութական պաշարների, ֆոնդերի ստեղծմանն ու կուտակմանը, դրանց նպատակային օգտագործման ապահովմանը.

20) մասնակցություն արտակարգ իրավիճակների հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց հասցված վնասի ու կարիքների գնահատմանը.

21) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված ուսումնավարժությունների համակարգումը և ուսումնավարժությունների պլանավորման ու անցկացման ընթացքում նրանց մեթոդական օգնության ցուցաբերումը.

22) մասնակցություն աղետի գոտուց բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման, կենսաապահովման պլանների մշակմանը և դրանց ճշգրտման հսկողության սահմանմանը.

23) մասնակցություն տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներին վերաբերող իրավական ակտերի, նախագծերի, պլանների, ծրագրերի, մեթոդական փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

24) մասնակցություն տարերային աղետների և տեխնածին վթարների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժությունների, վարժանքների և սեմինարների կազմակերպմանն ու անցկացմանը.

25) տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանության, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացմանն ուղղված միջոցառումների ծրագրերի իրականացումը.

26) մասնակցություն տարերային աղետների և տեխնածին վթարներին վերաբերող օրենսդրական և տարբեր նորմատիվ փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

27) մասնակցություն տարերային աղետների և տեխնածին վթարների ոլորտին վերաբերող միջազգային համագործակցության փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

28) մասնակցություն տարերային աղետների և տեխնածին վթարների մոնիթորինգի համակարգի ստեղծման ուղղությամբ հանրապետության գիտական, գիտահետազոտական, գիտափորձարարական և նախագծային կազմակերպությունների աշխատանքներին:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) ներկայացնում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում գործող պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ, սահմանում է հսկողություն՝ պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ.

2) իր իրավասությունների շրջանակներում մշակում է առաջարկություններ՝ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

3) ~~մասնակցություն~~ մասնակցում է աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների և ծրագրերի մշակման, հաստատման ու ճշգրտման կազմակերպմանը.

4) իր իրավասությունների սահմաններում մասնակցում է բնակչության պաշտպանության բնագավառի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

5) իր իրավասությանն առնչվող, Ծառայության գործունեությունը կանոնակարգող, հրամանների, հանձնարարականների և այլ փաստաթղթերի մշակում, ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում.

6) մասնակցում է տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներին վերաբերվող իրավական ակտերի, նախագծերի, պլանների, ծրագրերի, մեթոդական փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կազմակերպման և անցկացման, բնակչության, տարածքների, նյութական և մշակութային արժեքների պաշտպանության, տնտեսության կայուն գործունեության համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը.

8) մասնակցում է տարերային և տեխնածին աղետների ռիսկերի բացահայտման, գնահատման ու նվազեցման, վտանգավոր տարածքներում աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.

9) տարերային և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին.

10) քիմիապես վտանգավոր օբյեկտների և հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության վկայագրերի փորձաքննության իրականացում.

11) իր իրավասության սահմաններում անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմիններին՝ նրանց կողմից

արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում նախատեսված միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով.

12) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

13) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման վերաբերյալ, մասնակցում է իրականացվող աշխատանքներին.

14) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակներում բնակչության կենսաապահովման նպատակով սննդամթերքի, բժշկական և այլ նյութատեխնիկական միջոցների, պաշարների կուտակման և օգտագործման վերաբերյալ.

15) իրեն վերապահված իրավասությունների սահմաններում իրականացնում է բնակչության պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցություն, կազմակերպում է արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ միջոցառումներ, մասնակցում է բանակցությունների, ուսումնասիրում է միջազգային առաջավոր փորձը, կատարում է վերլուծություններ և ներկայացնում առաջարկություններ.

16) համակարգում է Ծառայության տարածքային ստորաբաժանումների աշխատանքները՝ աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակների արձագանքմանն ուղղված աշխատանքների իրականցման ուղղությամբ.

17) գրանցում, մշակում և վերլուծում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի մարմիններից ՀՀ տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը.

18) մշակում և ներկայացնում է անհրաժեշտ կանխարգելիչ ու հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ՝ օբյեկտներում ճառագայթային անվտանգության նորմերով սահմանված թույլատրելի մակարդակի գերազանցման, քիմիական նյութերի սահմանային թույլատրելի խտությունների ավելացման, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ հանդիսացող միկրոօրգանիզմների հայտնաբերման և մարդկանց ու կենդանիների հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների ծագման ժամանակ, մասնակցում է իրականացվող աշխատանքներին.

19) արտակարգ իրավիճակներում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական հսկողության համակարգի աշխատանքների համակարգում և շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացում.

20) ՀՀ տնտեսության օբյեկտների անհատական պաշտպանության միջոցների և քիմիական հետախուզության սարքերի պիտանելիության որոշում և եզրակացությունների տրամադրում.

21) իր իրավասության սահմաններում ստեղծում է արտակարգ իրավիճակների վերաբերյալ տվյալների բազաներ և ապահովում դրանց թարմացումը.

22) մասնակցում է հանրապետության տարածքում աղետների ռիսկերի կառավարման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին.

23) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներին վերաբերող տեղական և միջազգային ուսումնավարժությունների, վարժանքների, սեմինարների նախապատրաստման և անցկացման կազմակերպում, համակարգում,

24) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներին վերաբերող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անցկացվող ուսումնավարժությունների, վարժանքների, սեմինարների նախապատրաստման և անցկացման կազմակերպում, մեթոդական օգնության ցուցաբերում, համակարգում.

25) իր իրավասությունների սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման համակարգերի կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներին.

26) ներկայացնում է առաջարկություններ՝ աղետի գոտի հայտարարելու և աղետի գոտու տարածքը սահմանելու, ինչպես նաև այդ տարածքին առավելագույն օգնություն և նյութական պաշարներ տրամադրելու աշխատանքների կազմակերպման վերաբերյալ.

27) ներկայացնում է առաջարկություններ՝արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված Հանրապետական (Ազգային) և Նախարարության պլանները մասնակի կամ ամբողջական գործողության մեջ դնելու վերաբերյալ.

28) ներկայացնում է առաջարկություններ՝ միջազգային փրկարարական և մարդասիրական (նյութական) օգնություն ստանալու նպատակով միջազգային հանրությանը դիմելու անհրաժեշտության և ներկայացվող հայտի բովանդակության վերաբերյալ.

29) իր իրավասության սահմաններում մշակում է իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում է առաջարկություններ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

30) իր իրավասության սահմաններում մասնակցում է քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, բարձրացված հարցերի լուծմանը.

31) իր իրավասության սահմաններում մասնակցում է Ծառայության ստորաբաժանումների մասնագիտական և աշխատանքային հարցերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակմանն ու ներկայացմանը.

32) իր իրավասության սահմաններում համակարգում և մեթոդական օգնություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին պլանավորած ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում, ուսումնասիրում և համաձայնեցնում է ուսումնավարժությունների անցկացման փաստաթղթերը և արձանագրությունները.

33) իր իրավասության շրջանակներում մասնակցում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության և այլ մարմինների հետ փոխգործողությունների պլանների ճշգրտմանը.

34) մեթոդական օգնություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման պլանների, ծրագրերի մշակման գործում.

35) իր իրավասության շրջանակներում մասնակցում է Ազգային աջակցման մարմնի գործունեության համակարգմանը.

36) Նախարարի, Տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

37) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

8. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

9. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

10. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

11. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

12. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

13. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

14. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են փրկարարական ծառայության բարձրագույն, գլխավոր, ավագ և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

17. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

18. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Աղետներին պատրաստվածության և արձագանքման բաժին.

2) Տարերային աղետների բաժին.

3) Տեխնածին վթարների բաժին.

4) Ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի բաժին:

19. Վարչության աղետներին պատրաստվածության և արձագանքման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման կազմակերպում.

2) մասնակցություն արտակարգ իրավիճակների ~~կանխարգելման, դրանց~~ հետևանքների նվազեցման և վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված պլանների, մեթոդական ուղեցույցների և ծրագրերի մշակմանը.

3) մասնակցություն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված Հանրապետական (Ազգային) և Նախարարության պլանների մշակմանը.

4) մասնակցություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների օրինակելի ձևերի մշակմանը.

5) Ծառայության ստորաբաժանումների կողմից բնակչության պաշտպանության թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

6) համակարգում և սահմանում է հսկողություն՝ Վարչության տարեկան հիմնական միջոցառումների և ամսեկան աշխատանքային պլանների մշակման ու կատարման գործընթացի նկատմամբ.

7) բնակչության պաշտպանության համակարգի վիճակի համալիր գնահատման կազմակերպում և վիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

8) մասնակցություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների կողմից ներկայացված աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

9) արտակարգ իրավիճակներում տարահանման միջոցառումների կազմակերպում և համակարգում.

10) Վարչության կողմից կատարված աշխատանքների վերլուծում և ամփոփում, հաշվետվությունների կազմում.

11) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության թեմաներով ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպում.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման հիմնահարցերի վերաբերյալ որոշումների, հրամանների, հանձնարարականների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակում.

13) ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացնում իրավական և նորմատիվային ակտերի նախագծերի վերաբերյալ.

14) մշակում և ժամանակին ճշգրտում է Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

15) արտակարգ իրավիճակների պլանավորման աշխատանքներում անհրաժեշտ տվյալների հավաքագրում ու մշակում՝ գեոտեղեկատվական համակարգերի միջոցով.

16) իրականացնում է արտակարգ իրավիճակների պլանավորման աշխատանքներում անհրաժեշտ տվյալների հավաքագրման ու մշակման, տեղեկատվական բազաների թարմացման և համալրման աշխատանքներ.

17) արտակարգ իրավիճակների պլանավորման ուղղությամբ մշակում է թեմատիկ էլեկտրոնային քարտեզներ, ինչպես նաև իրականացնում է քարտեզակազմական աշխատանքներ՝ թվայնացված նյութերի հիմքով.

18) համակարգում և մեթոդական օգնություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին պլանավորած ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում, ուսումնասիրում և համաձայնեցում է ուսումնավարժությունների անցկացման փաստաթղթերը և արձանագրությունները.

19) մեթոդական օգնություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին արտակարգ իրավիճակների կանխման, կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման պլանների, ծրագրերի մշակման գործում.

20) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում Վարչության պետին՝ Ծառայության տարածքային ստորաբաժանումների գործունեության առավել արդյունավետ կազմակերպման վերաբերյալ.

21) իր իրավասության շրջանակներում մասնակցում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության և այլ մարմինների հետ փոխգործողությունների պլանների ճշգրտմանը.

22) իրականացնում է միջազգային մարդասիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների գործունեության, իրականացվող ծրագրերի մշտական մոնիթորինգ և ներկայացնում առաջարկություններ հնարավոր հետագա համագործակցության ուղղությունների վերաբերյալ.

23) կազմակերպում է միջազգային մարդասիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցությունը, վերջինիս ընդլայնումն ու իրականացումը.

24) կազմակերպում է միջազգային մարդասիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների ու վարժանքների մասնակցությունը.

25) մշակում է միջազգային համագործակցության շրջանակներում իրականացված գործունեության վերաբերյալ քաղվածքներ ու տեղեկանքներ.

26) Վարչության պետի հանձնարարությամբ համագործակցում է պետական կառավարման մարմինների հետ.

27) իր իրավասությունների սահմաններում բնակչության պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացում.

28) ապահովում է Փրկարար ծառայության և ՀՀ-ում հավատարմագրված աղետների ռիսկի կառավարման ոլորտով զբաղվող միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությունը.

29) ղեկավարում, համակարգում և սահմանում է հսկողություն՝ արտասահմանյան գործուղումների և միջազգային միջոցառումներին բարձրացված հարցերի և հետագա համագործակցության նկատմամբ.

30) ներկայացնում է առաջարկություններ՝ աղետի գոտի հայտարարելու և աղետի գոտու տարածքը սահմանելու, ինչպես նաև այդ տարածքին առավելագույն օգնություն և նյութական պաշարներ տրամադրելու աշխատանքների կազմակերպման վերաբերյալ.

31) ներկայացնում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված Հանրապետական (Ազգային) և Նախարարության պլանները մասնակի կամ ամբողջական գործողության մեջ դնելու վերաբերյալ.

32) ներկայացնում է առաջարկություններ՝ միջազգային փրկարարական և մարդասիրական (նյութական) օգնություն ստանալու նպատակով միջազգային հանրությանը դիմելու անհրաժեշտության և ներկայացվող հայտի բովանդակության վերաբերյալ.

33) մասնակցում է աղետի գոտուց բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման, կենսաապահովման պլանների մշակմանը և սահմանում հսկողություն՝ դրանց ճշգրտման նկատմամբ.

34) իր իրավասությունների սահմաններում բնակչության պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացում.

35) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Վարչության տարերային աղետների բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մասնակցում է բնածին արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանությանն ուղղված, ինչպես նաև սպառնացող վտանգի գնահատման ծրագրերի և նախագծերի մշակմանը.

2) մասնակցում է տարերային աղետների կանխման, կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.

3) մասնակցում է տարերային աղետների կանխման, կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժությունների, վարժանքների և սեմինարների կազմակերպմանն ու անցկացմանը.

4) իր իրավասության սահմաններում վերահսկողություն է իրականացնում տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ.

5) մասնակցություն տարերային աղետների հիմնահարցերին վերաբերվող օրենսդրական և տարբեր նորմատիվ փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

6) մասնակցում է տարերային աղետների ոլորտին վերաբերվող միջազգային համագործակցության փաստաթղթերի նախագծերի մշակմանը,

7) ստեղծում և վարում է տարերային աղետները բնութագրող բոլոր տարրերի, հետևանքների կանխատեսման և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական բազա.

8) մասնակցում է տարերային աղետների մոնիթորինգի համակարգի ստեղծման ուղղությամբ հանրապետության գիտական, գիտահետազոտական, գիտափորձարարական և նախագծային կազմակերպությունների աշխատանքներին.

9) Նախարարի, Տնօրենի, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

10) գրանցում և մշտապես թարմացնում է ՀՀ տարածքում տեղի ունեցած տարերային աղետների վերաբերյալ տվյալների տեղեկատվական բազան.

11) մասնակցում է ռիսկերի նվազեցման, վտանգավոր տարածքներում տարերային աղետների կանխման, կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.

12) մասնակցում է տարերային բնույթի արտակարգ իրավիճակներին վերաբերվող իրավական ակտերի, նախագծերի, պլանների, ծրագրերի, մեթոդական փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

13) նախապատրաստում է տարերային արտակարգ իրավիճակների փաստերի, բնույթների, ծավալների և պաշտպանական միջոցառումների մասին անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ.

14) հավաքում, մշակում և վերլուծում է գրանցված տարերային արտակարգ իրավիճակների և պատճառված վնասի չափերի վերաբերյալ տեղեկատվությունը,

15) մասնակցում է տարերային աղետների հետևանքով առաջացած վնասներն ու նրանց պատճառներն ուսումնասիրող հանձնաժողովների աշխատանքներին.

16) համակողմանի աջակցություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին՝ տարերային ռիսկերի նվազեցման աշխատանքների իրականցման ուղղությամբ.

17) մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ տարերային աղետների ռիսկի նվազեցման աշխատանքների կատարման ուղղությամբ:

21. Վարչության տեխնածին վթարների բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ստեղծում և մշտապես թարմացնում է վտանգավոր օբյեկտների մասին տվյալների տեղեկատվական բանկը.

2) ուսումնասիրում և ներկայացնում է առաջարկություններ՝ վտանգավոր օբյեկտներում իրականացվող արտադրական գործընթացների անվտանգության ուժեղացմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ.

3) մշակում է տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներին վերաբերվող իրավական ակտերի, պլանների, ծրագրերի, մեթոդական ու տեխնիկական փաստաթղթերի նախագծեր.

4) մասնակցում է տեխնածին աղետների կանխման, կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժությունների, վարժանքների և սեմինարների կազմակերպմանն ու անցկացմանը.

5) իրականացնում է հանրապետության վտանգավոր օբյեկտներում հավանական տեխնածին վթարների և աղետների կանխման, կանխարգելման, դրանց հետևանքների վերացման աշխատանքներ.

6) նախապատրաստում է տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների փաստերի, բնույթների, ծավալների և պաշտպանական միջոցառումների մասին անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ.

7) իրականացնում է քիմիական վտանգավոր օբյեկտում առկա ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, վերլուծություն և ուժեղ ներգործող թունավոր նյութերի թույլատրելի (նախագծային) քանակի նկատմամբ հսկողություն.

8) հավաքում, մշակում և վերլուծում է գրանցված տեխնածին արտակարգ իրավիճակների և պատճառված վնասի չափերի վերաբերյալ տեղեկատվությունը.

9) հավաքում, վերլուծում և ներկայացնում է առաջարկություններ՝ քիմիական վտանգավոր օբյեկտների անվտանգության վկայագրերում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ.

10) մասնակցում է արդյունաբերական օբյեկտներում և հիդրոտեխնիկական կառույցներում տեղի ունեցած վթարների պատճառներն ուսումնասիրող հանձնաժողովների աշխատանքներին.

11) հսկողություն է սահմանում թունաքիմիկատների գերեզմանոցների, վտանգավոր քիմիական նյութերի կուտակման վայրերի նկատմամբ, կազմակերպում և համակարգում է վտանգների կանխարգելմանն ուղղված աշխատանքները.

12) համակողմանի աջակցություն է ցուցաբերում Ծառայության տարածքային ստորաբաժանումներին՝ տեխնածին ռիսկի նվազեցման աշխատանքների իրականցման ուղղությամբ.

13) մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ տեխնածին աղետների ռիսկի նվազեցման աշխատանքների կատարման ուղղությամբ.

14) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

22. Վարչության ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) արձագանքում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակներին.

2) արձագանքում է բնակչության ճառագայթային, քիմիական և կենսաբանական բնույթի դիմումներին և ահազանգերին.

3) իրականացնում է քիմիկ-հետախույզի շուրջօրյա հերթապահություն.

4) արտակարգ իրավիճակներում համակարգում է ճառագայթային, քիմիական և մանրէաբանական մշտական հսկողության համակարգի գործողությունները.

5) քիմիական, ճառագայթային և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկների ուժերով կազմակերպում է շրջակա միջավայրի քիմիական, ճառագայթային և մանրէաբանական իրավիճակի հսկողությունը.

6) գրանցում, մշակում և վերլուծում է քիմիական, ճառագայթային և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի մարմիններից իրավիճակի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը.

7) մշակում և ներկայացնում է անհրաժեշտ կանխարգելիչ ու հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ՝ օբյեկտներում ճառագայթային անվտանգության նորմերով սահմանված թույլատրելի մակարդակի գերազանցման, շրջակա միջավայրում ճառագայթաակտիվ նյութերի հայտնաբերման, օբյեկտներում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի խտությունների ավելացման, թունավոր և կասկածելի նյութերի հայտնաբերման, մարդկանց ու կենդանիների հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների ծագման դեպքում.

8) ճառագայթային, քիմիական և կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների (այդ թվում ահաբեկչության) օջախներում իրականացնում է՝ մասնագիտացված հետախուզություն, վտանգավոր գոտիների սահմանների որոշում, սահմանազատում, անհայտ ծագման քիմիական նյութերի հայտնաբերում, նույնականացում և նմուշառում հետագա լաբորատոր հետաքննության անցկացման համար, ինչպես նաև աշխատանքներում ներգրավված անձնակազմի վարակազերծում.

9) մասնակցում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների (այդ թվում ահաբեկչության) հետևանքների վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին.

10) մասնակցում է արտակարգ իրավիճակների օջախներում կարանտինային և այլ սանիտարահակահամաճարակային միջոցառումների իրականացման աշխատանքներին.

11) ռադիոակտիվ նյութերի վնասազերծման աշխատանքներում աջակցություն է ցուցաբերում համապատասխան կառույցներին.

12) ՀԱԷԿ-ի վթարի դեպքում իրականացնում է ՀԱԷԿ-ին հարակից 5 և 10 կմ շառավղով գոտիների ճառագայթային մոնիթորինգ.

13) ապահովում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական հետախուզության անցկացման համար անհրաժեշտ սարքավորումների և միջոցների մշտական պատրաստականությունը.

14) կազմակերպում և անց է կացնում մասնագիտացված ուսումնավարժություններ, վարժանքներ և սեմինարներ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների հետ.

15) մասնակցում է Նախարարության և/կամ այլ գերատեսչությունների կողմից կազմակերպված համալիր, հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական և ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություններին.

16) անց է կացնում պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների անհատական պաշտպանական միջոցների, մոնիթորինգի սարքավորումների լաբորատոր ստուգում և հետագա պիտանելիության վերաբերյալ տրամադրում է եզրակացություններ.

17) անց է կացնում մասնագիտական պարապմունքներ Նախարարության ստորաբաժանումների հետ.

18) համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ՝ Նախարարության ճառագայթային, քիմիական և կենսաբանական կարողությունների կատարելագործման նպատակով մասնակցում է միջազգային նպատակային ծրագրերին, աշխատաժողովներին, վարժանքներին և դասընթացներին.

19) ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացնում իրավական և նորմատիվային ակտերի նախագծերի վերաբերյալ.

20) Բաժնի գործունեության արդյունավետության և արդիականության ապահովման նպատակով՝ մշտապես ուսումնասիրում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական ոլորտի միջազգային առաջատար փորձը.

21) Վարչության պետի հանձնարարությամբ, ինչպես նաև իր իրավասությունների սահմաններում, համագործակցում է պետական կառավարման մարմինների հետ.

22) իրականացնում կամ մասնակցում է տարբեր նորմատիվային իրավական ակտերի, այլ փաստաթղթերի մշակմանը.

23) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԻԿՈՒՆՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է Ծառայության ստորաբաժանումների նյութատեխնիկական ապահովումը, գույքի և այլ ապրանքանյութական արժեքների մատակարարումը, տրանսպորտային միջոցների վերանորոգումն ու տեխնիկական սպասարկումը և այլ գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Քաղաքացիական ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար).

2) կանոնադրությունը հաստատում է Նախարարության Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն):

3) աշխատողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք են:

4. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

5. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են Նախարարը, Տնօրենը և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1) Ծառայության ստորաբաժանումներին նյութատեխնիկական միջոցներով, և այլ ապրանքանյութական արժեքներով ապահովումը և հատկացված գույքի օգտագործման նկատմամբ հսկողության սահմանումը.

2) Ծառայության կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերի նախապատրաստումը, ինչպես նաև ստացված գույք-սարքավորումների ընդունումը, պահեստավորումը և բաշխումը.

3) Ծառայության ստորաբաժանումների համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների, վառելիքաքսուքային նյութերի, գույք-սարքավորումների, ավտոպահեստամասերի, հանդերձանքի, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, գրենական պիտույքների, դեղորայքի և այլ ապրանքանյութական արժեքների պլանավորումը.

4) Ծառայության ստորաբաժանումների հետ համատեղ, բնակչության պաշտպանության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների և ապրանքանյութական արժեքների պահանջվող քանակների պլանավորումը.

5) արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար նախատեսված նյութատեխնիկական միջոցների, մասնավորապես վառելիքաքսուքային նյութերի, հանդերձանքի ու պարենի պետական պահուստում կուտակված պաշարների արդյունավետ օգտագործումը, տարբեր գերատեսչական մարմիններից, կազմակերպություններից և առանձին քաղաքացիներից օգնության կարգով աղետի գոտի ուղղվող նյութական միջոցների հաշվառման և բաշխման աշխատանքների օպերատիվ կազմակերպման ու իրականացման նկատմամբ վերահսկումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նույն հարցերով գործելու են հատուկ ստեղծված հանձնաժողովներ:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) արտակարգ իրավիճակների անմիջական սպառնալիքի կամ առաջացման դեպքում կազմակերպում է պետական պահուստում կուտակված նյութատեխնիկական միջոցների ապաամրագրումը, բաշխումը և դրանց օգտագործման նկատմամբ հսկողությունը.

2) օրենքով սահմանված կարգով իրականացնում է Ծառայության ստորաբաժանումների ապրանքանյութական արժեքների գույքագրումն ու հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրսգրումը.

3) ապահովում է տրանսպորտային միջոցների, հատուկ փրկարարական և հրշեջ սարքավորումների, փոքր մեխանիզմների, ագրեգատների տեխնիկական սպասարկումը, ընթացիկ և կապիտալ վերանորոգումների ժամանակին և որակով կատարումը.

4) կազմակերպում է անձնակազմի, փրկարարական ջոկատների, առանձին ստորաբաժանումների մարտական պատրաստականության նյութատեխնիկական ապահովումը.

5) պլանավորում է Ծառայությանն անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների պահանջարկը, կազմակերպում դրանց ձեռքբերումը և հսկողություն իրականացնում մատակարարների՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ.

6) վերահսկում է ստորաբաժանումների նյութատեխնիկական միջոցների՝ որպես մարդասիրական օգնություն ստացված ապրանքների հաշվառման, հատկացման (բաշխման), օգտագործման ու պահպանման գործընթացը.

7) իրականացնում է Ծառայության ստորաբաժանումների տրանսպորտային միջոցների, հատուկ և հիմնական տեխնիկայի կապիտալ, միջին և ընթացիկ վերանորոգումները, տեխնիկական զինվածության, սարքավորումների, ագրեգատների, ուժային փորձարկումների հետ կապված աշխատանքները.

8) տեղական, տարածքային և միջազգային ուսումնավարժանքների ժամանակ ապահովում է համապատասխան տեխնիկայով, փրկարարական գույք-սարքավորումներով և հանդերձանքով.

9) իրականացնում է զենք-զինամթերքի հանձնման-ընդունման, պահեստավորման, բաշխման և տեղափոխման աշխատանքներ.

10) իր իրավասության սահմաններում մշակում է իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում՝ համապատասխան առաջարկություններ.

11) ուսումնասիրում է վեր է հանում Ծառայության տարածքային ստորաբաժանումների շենքերի պահպանման համար անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների խնդիրները, տալիս առաջարկություններ դրանց իրականացման վերաբերյալ.

12) որոշում է Ծառայության կազմակերպման նպատակահարմարությունը՝ ստորաբաժանումների տարածքային տեղակայման առումով և տալիս առաջարկություններ.

13) այլ մարմիններից նոր տարածքների ներգրամվան նպատակահարմարության վերաբերյալ տալիս առաջարկներ.

14) Տնօրենի, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի և Նախարարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

15) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Նախարարության, Ծառայության կանոնադրություններով սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Իրային միջոցներով ապահովման և հիմնական ֆոնդերի մոնիտորինգի բաժին.

2) Պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժին.

3) Փրկարարական տեխնիկայի, սարքավորումների և վառելիքաքսուքային նյութերի ապահովման բաժին.

4) Թիկունքային ապահովման և սպառազինության բաժին.

5) Տեխնիկայի և սարքավորումների վերանորոգման բազա:

20. Վարչության իրային միջոցներով ապահովման և հիմնական ֆոնդերի մոնիտորինգի բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմերին համապատասխան ապահովում է հանդերձանքի պլանավորումը, հաշվարկում տարեկան պահանջարկը.

2) իրականացնում է Ծառայության փրկարարական ծառայողների հանդերձանքի բաշխումը.

3) վարում է համազգեստի տրամադրման անհատական հաշվառում.

4) յուրաքանչյուր ամիս հաշվարկում է հանդերձանքի պահանջարկն ըստ ստորաբաժանումների, դրա ձեռքբերման վերաբերյալ տալիս է առաջարկություններ և պլանավորում բաշխումը.

5) յուրաքանչյուր ամիս կազմում է հանդերձանքի շարժի վերաբերյալ հաշվետվություն.

6) իրականացնում է իրային միջոցների հաշվառում, պլանավորում դրանց ձեռքբերումը և կազմակերպում բաշխումը.

7) յուրաքանչյուր ամիս կազմում է իրային շարժի վերաբերյալ հաշվետվություն.

8) Վարչության պետին (Վարչության պետի տեղակալին) ներկայացնում է Բաժնի աշխատանքային ծրագրերը, ապահովում դրանց կատարողական տեղեկանքներն ու հաշվետվությունները.

9) ուսումնավարժությունների անցկացման, արտակարգ իրավիճակների ժամանակ, տոնական միջոցառումների կազմակերպման նպատակով փրկարարական ծառայողների համար անհրաժեշտ իրային միջոցներ ձեռք բերելու ուղղությամբ իրականացնում է համապատասխան աշխատանքներ, պահանջարկի հաշվարկ և տրամադրում.

10) վարում է համաձայնեցման աշխատանքներ մատակարար կազմակերպությունների հետ՝ պայմանագրերի շրջանակներում պահանջվող հանդերձանքի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ.

11) մասնակցում է որպես մարդասիրական օգնություն ստացած գույքի՝ հանձնաժողովի աշխատանքներին.

12) կազմակերպում է մարդասիրական օգնություն ստացած իրային միջոցների բաշխումը, իրականացնում դրա հաշվառումը.

13) Ծառայության կարիքների համար նոր տարածքների ներգրավման նպատակով մասնակցում է հանձնաժողովների աշխատանքներին, տալիս առաջարկություններ ծառայության կազմակերպման նպատակահարմարության վերաբերյալ.

14) տարվա ընթացքում ուսումնասիրում է Ծառայության ստորաբաժանումների շենքերի վերանորոգման համար անհրաժեշտ խնդիրները, ամփոփում տվյալները և տալիս առաջարկներ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար.

15) հավաքագրում է տարածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված շինաշխատանքներում տեղ գտած թերությունների մասին տեղեկատվությունը, վերլուծում և ներկայացնում Տնօրինությանը.

16) մասնակցում է քաղաքացիների և կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումների ուսումնասիրմանը՝ Ծառայության շենքերի կամ դրանց մի հատվածի օտարման, վարձակալության տրամադրման նպատակահարմարությունը որոշելու նպատակով: Տալիս է համապատասխան առաջարկություններ.

17) մասնակցում է Ծառայության շենքերում հնարավոր բնակելի տարածքների տրամադրման խնդիրների ուսումնասիրմանը, մասնակցում համապատասխան հանձնաժողովի աշխատանքներին, տալիս առաջարկ բնակելի տարածքի տրամադրման նպատակահարմարության վերաբերյալ.

18) պլանավորում է ջրաչափերի, գազի և էլ.հաշվիչների փոխարինումը.

19) կազմում է Բաժնի գործառույթներից բխող իրավական ակտեր.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Նախարարության, Ծառայության կանոնադրություններով սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում Ծառայության գնումների տարեկան անվանացանկի կազմումը և Նախարարություն ներկայացումը.

2) անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների պլանավորման ու ձեռքբերման հետ կապված Ծառայության ստորաբաժանումներում ուսումնասիրությունների անցկացումը, դրանց վերլուծությունը և անվանացանկի կազմումը.

3) Ծառայության կարիքների համար անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների գնման ընթացակարգի փաթեթի (գնման ժամանակացույցի, վճարման ժամանակացույցի, տեխնիկական բնութագրերի) կազմումը.

4) Ծառայության ստորաբաժանումներին անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների պահանջարկի հաշվառումը, պլանավորումը և հատկացումը.

5) Ծառայության գույքի հաշվառումը, տարեկան գույքագրումների անցկացումը և փաստաթղթավորումը.

6) Նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության հետ գույքի առկայության և հաշվառման ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինը ամիսների և տարեկան համեմատությունների անցկացումը.

7) դուրսգրման ենթակա գույքի հաշվառումը և այդ աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

8) պահեստավորված կամ հատկացված գույքի շարժի վերաբերյալ հսկողության իրականացումը.

9) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման խոչընդոտների, թերությունների ու բացթողումների վերհանումը, քննարկումների կազմակերպումը և լուծման ուղիների մշակումը.

10) տարվա գնումների պլանով նախատեսված ապրանքանյութական արժեքների ընդունման գործընթացի կազմակերպումը.

11) պլանավորման, հաշվառման և վերլուծության հետ կապված այլ գործառույթներ.

12) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Նախարարության, Ծառայության կանոնադրություններով սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով այլ աշխատանքների իրականացումը:

22. Վարչության փրկարարական տեխնիկայի, սարքավորումների և վառելիքաքսուքային նյութերի ապահովման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է հրշեջ-փրկարարական տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերման, հաշվառման, Ոստիկանությունում գրանցման, տեխնիկական զննության, ապահովագրության և բաշխման աշխատանքները.

2) կազմակերպում և իրականացնում է Ծառայությունում հաշվառված ավտոտրանսպորտային միջոցների՝ Ոստիկանությունում գրանցման, պետական համարանիշերի փոխման, պարտադիր ապահովագրության և տարեկան տեխնիկական զննության աշխատանքները.

3) հսկողություն է սահմանում տրանսպորտային միջոցների, փրկարարական և հրշեջ սարքավորումների, փոքր մեխանիզմների, ագրեգատների տեխնիկական սպասարկման, ընթացիկ և կապիտալ վերանորոգումների ժամանակին և որակով կատարման նկատմամբ.

4) իրականացնում է Ծառայության ստորաբաժանումներում շահագործվող հրշեջ-փրկարարական տեխնիկայի, տեխզինվածության, փողրակային տնտեսության ուժային փորձարկումներ.

5) կազմակերպում է Ծառայության վարորդական անձնակազմի նախնական ուսուցման պարապմունքները, ընդունում ստուգարքներ և տալիս հատուկ տեխնիկայի շահագործման թույլտվություն.

6) իրականացնում է Ծառայության տրանսպորտային միջոցների հաշվառումը, տալիս է առաջարկներ դրանց վերահատկացումների վերաբերյալ, ապահովում է անսարք տեխնիկայի, ինչպես նաև վերահատկացված տեխնիկայի տեղափոխման աշխատանքները.

7) կազմակերպում է Ծառայության ստորաբաժանումներում շահագործվող՝ մարտական հաշվարկում գտնվող անսարք տրանսպորտային միջոցի ժամանակավոր փոխարինումը և դրա վերանորոգման աշխատանքների իրականացումը.

8) հաշվարկում է Ծառայության կարիքների համար անհրաժեշտ վառելիքաքսուքային նյութերի պահանջարկը, սահմանում է վառելիքաքսուքային նյութերի ծախսի ամսական չափաքանակները, ապահովում հատկացումը և վարում ամսական հաշվառում.

9) հաշվարկում է փոքր մեխանիզմների և ագրեգատների վառելիքաքսուքային նյութերի փաստացի ծախսը.

10) հաշվառում և պլանավորում է անհրաժեշտ փրփրահեղուկի, տեխզինվածության և փողրակային տնտեսության պահանջարկը և ներկայացնում առաջարկություններ հատկացման վերաբերյալ.

11) ուսումնասիրում է նոր ընդունվող վարորդների անձնական գործերը և տալիս իր համաձայնությունը:

23. Վարչության թիկունքային ապահովման և սպառազինության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է զենք-զինամթերքի հանձնման-ընդունման, պահեստավորման, բաշխման և տեղափոխման աշխատանքները.

2) իրականացնում է վարչական շենքի սպասարկումը և պահպանումը.

3) իրականացնում է ստորաբաժանումներին անհրաժեշտ տնտեսական ապրանքների և շինանյութի հաշվառում, պլանավորում և բաշխում.

4) իրականացնում է ստորաբաժանումներին հատկացված տնտեսական գույքի հաշվառումը.

5) կազմակերպում է Ծառայության ստորաբաժանումների տպիչ սարքերի վերանորոգման և լիցքավորման աշխատանքները:

24. Վարչության տեխնիկայի և սարքավորումների վերանորոգման բազան, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է Ծառայության ստորաբաժանումներում շահագործվող անսարք ավտոմեքենաների նորոգումների ժամանակին ու որակով կատարումը.

2) համաձայն ժամանակացույցի՝ կազմակերպում է Ծառայության տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործընթացը.

3) համաձայն գործարանային բացատրագրերի և գործող հրահանգների՝ ըստ հաստատված ժամանակացույցի՝ կազմակերպում է հատուկ տեխնիկայի, տեխնիկական զինվածության, ագրեգատների և սարքավորումների ուժային փորձարկումների իրականացումը.

4) ապահովում է նորոգումների ժամանակ օգտագործված ավտոպահեստամասերի և այլ ապրանքանյութական արժեքների՝ համապատասխան տեղադրման ակտերում գրանցելը.

5) առաջարկություններ է ներկայացնում Ծառայությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումների կատարման վերաբերյալ.

6) գույքագրման հանձնաժողովին է ներկայացնում գրավոր տեղեկատվություն հետագա շահագործման համար ոչ պիտանի ավտոմեքենաների դուրսգրման վերաբերյալ.

7) առաջարկություններ է ներկայացնում բազայի վերազինման և գույք-սարքավորումներով ապահովելու վերաբերյալ.

8) պատասխանատվություն է կրում տրանսպորտային միջոցների վերանորոգումների ու տեխնիկական սպասարկումների, ուժային փորձարկումների և այլ աշխատանքների ժամանակին ու որակով կատարման համար.

9) իրականացնում է ելքագրված ապրանքների բացթողումը ստորաբաժանումներին և մուտքագրված ապրանքների հաշվառումը համապատասխան պահեստներում:

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ծառայության կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է փրկարարական ծառայության կազմակերպումը, վերահսկողությունը, աշխատանքային ծրագրերի և պլանների համակարգումը, Ծառայության ստորաբաժանումների միջև կապի կազմակերպումը, տեխնիկական, ծրագրային ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության կազմակերպումը, պահպանությունը, հերթապահության ու պարեկապահակային ծառայությանն ուղղված գործունեության իրականացումը:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Հանրային ծառայության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ և քաղաքացիական ծառայողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Ծառայության կողմից իրականացվող գործունեությանը.

2) Ծառայության իրավասության շրջանակներում մասնակցությունն իրավական ակտերի նախագծերի, պայմանագրերի մշակմանը և սահմանված կարգով դրանց հաստատման ներկայացմանը.

3) Ծառայության իրավասության շրջանակներում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ իրականացվող բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ Ծառայության իրավական ապահովումը, մասնակցությունը բնագավառի գիտատեխնիկական և նախագծային աշխատանքներին.

4) իր իրավասության շրջանակներում մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցությանը, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում համագործակցության համակարգման իրականացմանը.

5) Ծառայության իրավասության շրջանակներում՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտում միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների գործունեության մասին նյութերի հավաքագրումը, վերլուծությունը, մասնակցությունը համապատասխան տեղեկատվական բազայի ստեղծմանը.

6) Ծառայության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակումը.

7) Նախարարության, Ծառայության վարչական շենքերում հերթապահության (պահպանության) ու պարեկապահակային ծառայության կազմակերպումն ու ապահովումը.

8) ռազմական գործողությունների կամ ռազմական դրության ժամանակ, Ծառայության իրավասության սահմաններում, հանձնարարված կառավարման կետերի և այլ օբյեկտների պահպանության իրականացումը.

9) տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և ազդարարման համակարգերի աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.

10) Ծառայության համակարգում տեղեկատվության փոխանակման համակարգերի զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների նոր ստանդարտների ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

11) իր իրավասության շրջանակներում ՀՀ-ում կենտրոնացված ազդարարման համակարգի արդիականացումը և դրա աշխատունակության ապահովումը.

12) Ծառայության համակարգում ժամանակակից ռադիոկապի համակարգի հիմնումը, զարգացումը և դրա աշխատունակության ապահովումը.

13) Ծառայության համակարգում կապի, ինքնավար կառավարման համակարգերի կազմակերպումը, զարգացումը և դրա աշխատունակության ապահովումը.

14) ստորաբաժանումների, ինչպես նաև փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի միջև կապի կազմակերպումը.

15) իր իրավասության շրջանակներում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կառավարման գործընթացների հուսալի կապով ապահովումը.

16) իր իրավասության շրջանակներում ՀՀ-ում գործող կապի օպերատորների հետ Ծառայության համագործակցության կազմակերպումը.

17) իր իրավասության շրջանակներում Ծառայության համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և ազդարարման ոլորտում կիրառվող սարքերի, սարքավորումների, համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

18) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության և պետական կառավարման համակարգի այլ մարմինների հետ փոխգործողությունների պլանների ճշգրտմանը.

19) իր իրավասության շրջանակներում մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Ծառայության միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

20) իր իրավասության շրջանակներում մասնակցությունն արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումներին.

21) իր իրավասության շրջանակներում մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնական միջոցառումների իրականացման ժամանակ Ծառայության ստորաբաժանումներին իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, ցուցումների փոխանցմանը.

22) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի կողմից տրված այլ խնդիրների ու հանձնարարությունների կատարումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է իրավական ակտերի և փրկարարական ծառայության կազմակերպմանն ուղղված այլ փաստաթղթերի նախագծեր, հավանություն է տալիս Ծառայության ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի նախագծերին, ներկայացնում է առաջարկություններ՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառը կարգավորող իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

2) Ծառայության իրավասության շրջանակներում՝ մասնակցում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին.

3) մասնակցում է փրկարարական ծառայության ստորաբաժանումների ստեղծման, դրանց համալրման ապահովման նորմատիվների մշակմանը, փրկարարների և փրկարարական կազմավորումների որակավորմանը.

4) Ծառայության իրավասության շրջանակներում իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցություն, համագործակցում է իրավական ապահովում իրականացնող ստորաբաժանումների հետ, մասնակցում է բնագավառում կնքվող միջազգային համաձայնագրերի նախագծերի մշակմանը և առաջավոր փորձի ուսումնասիրմանը.

5) իր իրավասության սահմաններում մասնակցում է քաղաքացիների նամակների (առաջարկություններ, դիմում-բողոքներ) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, դրանցում բարձրացված հարցերի լուծմանը.

6) իրականացնում է անձնակազմի աշխատանքային ու սոցիալական հարցերի և այլ երաշխիքների իրավական ապահովումը.

7) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ կատարում է Ծառայության ստորաբաժանումների փաստաթղթերի և հաշվառման մատյանների ուսումնասիրություն, պահանջում և ստանում է բացատրություններ ու տեղեկանքներ, ծանոթանում է այլ ծառայողական փաստաթղթերին և աշխատակիցների անձնական գործերին.

8) մասնակցում է արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում Ծառայության կողմից իրականացվող ուսումնավարժություններին, վարժանքներին և այլ գործունեությանը, ներկայացնում է առաջարկություն այդ գործունեության առավել արդյունավետ կազմակերպման ու իրականացման վերաբերյալ.

9) մշակում և ներկայացնում է առաջարկություններ՝ Ծառայության ստորաբաժանումների մասնագիտական, ծառայողական ու աշխատանքային հարցերի կատարելագործման ուղղությամբ.

10) Ծառայության տարածքային ստորաբաժանումներում անցկացված համալիր ստուգումների ընթացքում հայտնաբերված թերությունների արձանագրման կապակցությամբ ներկայացնում է համապատասխան դիրքորոշումներ, ցուցաբերում՝ մեթոդական, մասնագիտական օգնություն

11) մշակում է Ծառայության գործունեության հաշվետվությունները.

12) կազմակերպում և իրականացնում է Նախարարության ու Ծառայության վարչական շենքերի պահպանությունը (հերթապահությունը), վարչական և իրեն հանձնարարված այլ տարածքներում պարեկապահակային ծառայությունը.

13) կազմակերպում է աղետի գոտու վայրում փրկարարական աշխատանքների ճամբարի, անհրաժեշտության դեպքում մարդասիրական օգնության շարասյան կամ այլ բեռների պահպանությունը, այդ ուղղությամբ ներկայացնում է առաջարկություններ.

14) հսկողություն է իրականացնում Նախարարության և Ծառայության վարչական շենքեր աշխատակիցների, քաղաքացիների, գույքի և այլ նյութական միջոցների մուտքի ու ելքի նկատմամբ, տրամադրում է մուտքի թույլտվություն.

15) տիրապետում և տնօրինում է Նախարարության ու Ծառայության վարչական շենքերում տեղադրված տեսավերահսկման և անցագրային սարքավորումներում առկա տեղեկատվությունը.

16) մշակում է Ծառայության կապի համակարգերի ստեղծման, կիրառման, զարգացման և անվտանգության ապահովման փաստաթղթեր, ինչպես նաև պլանավորում, կազմակերպում և համակարգում է այդ փաստաթղթերից բխող աշխատանքները.

17) մշակում է ինքնավար կառավարման համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների՝ Ծառայության համակարգում կիրառման, զարգացման և անվտանգության ապահովման ռազմավարություններ, համակարգում է այդ ռազմավարությունից բխող աշխատանքները.

18) Ծառայության ստորաբաժանումներին ապահովում է կապով և կազմակերպում կապի համակարգի անխափան գործունեությունը.

19) իրականացնում է Ծառայության ստորաբաժանումներում առկա կապի և ազդարարման միջոցների հաշվառում ու ներկայացնում առաջարկություն՝ վերաբաշխման վերաբերյալ.

20) իրականացնում է Ծառայության համակարգում ժամանակակից ռադիոկապի հիմնման և զարգացման գործընթացը.

21) իր իրավասության շրջանակներում իրականացնում է կապի, ինքնավար կառավարման համակարգերի կազմակերպման և զարգացման գործընթացը.

22) կազմակերպում է ՀՀ-ում կենտրոնացված ազդարարման համակարգի աշխատունակության ապահովման և վերանորոգման գործընթացները.

23) իր իրավասության շրջանակներում կարգավորում և սպասարկում է Ծառայությանը պատկանող կապի մալուխային տնտեսությունը.

24) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, կարգավորում, սպասարկում և կառավարում է Ծառայության սերվերային տնտեսությունը.

25) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, կարգավորում, սպասարկում և վերահսկում է Ծառայության տեսաձայնային համակարգերը.

26) իր իրավասության շրջանակներում կարգավորում, սպասարկում, կառավարում և վերանորոգում է Ծառայության ինքնավար հեռախոսային կայանների համակարգերը.

27) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, կարգավորում և սպասարկում է Ծառայության համակարգում կիրառվող անվտանգության՝ տեսախցիկների և անցագրային ռեժիմի ապահովման համակարգերը.

28) իր իրավասության շրջանակներում կարգավորում և սպասարկում է արբանյակային կապը.

29) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, կարգավորում, սպասարկում և կառավարում է Ծառայությանը պատկանող ցանցային համակարգերը.

30) իրականացնում է Ծառայությունում առկա համակարգչային ցանցի ամենօրյա սպասարկում.

31) իրականացնում է Ծառայության համակարգչային տեխնիկայի ծրագրային սպասարկում, ներկայացնում է հայտեր տեխնիկական վերանորոգման կազմակերպման վերաբերյալ.

32) իր իրավասության շրջանակներում կարգավորում է Ծառայության համացանցի օգտատերերի կայքերի հասանելիության խնդիրները.

33) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է ՀՀ-ում գործող կապի օպերատորների հետ Ծառայության համագործակցությունը.

34) ցանցերի, համակարգչային տեխնիկայի սպասարկման և անխափան գործունեության ապահովման նպատակով կազմակերպում և իրականացնում է շուրջօրյա հերթապահություն.

35) ներկայացնում է հայտեր և առաջարկություններ՝ կապի միջոցների ձեռքբերման վերաբերյալ.

36) լիազոր մարմնին ներկայացնում է հայտեր՝ կապուղիների տրամադրման վերաբերյալ.

37) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է կապի և ազդարարման սարքերի, սարքավորումների հաշվառման և վերանորոգման աշխատանքները, մասնակցում է մասնագիտական եզրակացություն տրամադրելու գործընթացին.

38) իր իրավասության շրջանակներում կապի, ազդարարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում համակարգում և վերահսկում է Ծառայության ստորաբաժանումների գործունեությունը.

39) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների հետ.

40) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ինչպես նաև

քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակմանը.

41) իր իրավասության շրջանակներում մասնակցում է Զինված ուժերի գլխավոր շտաբի հետ պատերազմի ժամանակ Ծառայության գործելու պատրաստականության խնդիրների համաձայնեցմանը.

42) մասնակցում է միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.

43) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով, Նախարարության և Ծառայության կանոնադրություններով, ինչպես նաև Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանով, սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով, իրականացնում այլ գործառույթներ

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

17. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

18. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Կապի, ազդարարման համակարգերի և տեխնիկական ապահովման բաժին.

2) Ծրագրերի ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության կազմակերպման բաժին.

3) Ինքնավար կառավարման համակարգերի բաժին.

4) Ծառայության կազմակերպման բաժին.

5) Ծառայության ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժին.

6) Հատուկ պահպանության և պարեկապահակային բաժին:

19. Վարչության կապի, ազդարարման համակարգերի և տեխնիկական ապահովման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է ազդարարման, Ծառայության կապի համակարգերի կիրառման և զարգացման փաստաթղթերը.

2) պլանավորում, կազմակերպում և համակարգում է կապի և ազդարարման համակարգերի կիրառման և զարգացման փաստաթղթերից բխող աշխատանքները.

3) մշակում է Ծառայության կապի զարգացման պլանը.

4) իր իրավասության շրջանակներում մասնակցում է ՀՀ-ում կենտրոնացված ազդարարման համակարգի արդիականացմանը և դրա աշխատունակության ապահովման գործընթացներին.

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է ժամանակակից ռադիոկապի հիմնման և զարգացման գործընթացը.

6) ներկայացնում է հայտեր, առաջարկություններ կապի միջոցների ձեռքբերման վերաբերյալ.

7) Ծառայության ստորաբաժանումներին ապահովում է կապով.

8) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է կապի սարքերի, սարքավորումների հաշվառման աշխատանքները, մասնակցում է մասնագիտական եզրակացության տրման գործընթացին.

9) իր իրավասության շրջանակներում կարգավորում և սպասարկում է արբանյակային կապը.

10) անհրաժեշտության դեպքում լիազոր մարմնին ներկայացնում է հայտեր՝ կապուղիների տրամադրման վերաբերյալ.

11) իր իրավասութան շրջանակներում ներկայացնում է առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների ապահովման վերաբերյալ.

12) իր իրավասության շրջանակներում պատրաստում է Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանների ու հանձնարարականների նախագծեր.

13) վերահսկում է Ծառայությունում կապի միջոցների սահմանված կարգով շահագործումը.

14) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում Ծառայության կապի համակարգի ժամանակին արդիականացման վերաբերյալ.

15) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է Ծառայությանը տրամադրված ռադիոհաճախականությունների բաշխման գործընթացը.

16) մասնակցում է Ծառայության ստորաբաժանումների համալիր ուսումնասիրություններին և ստուգումներին.

17) իր իրավասության շրջանակներում մասնակցում է ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի հետ Ծառայության՝ պատերազմի ժամանակ գործելու խնդիրների համաձայնեցմանը.

18) իր իրավասության շրջանակներում մասնակցում է Ծառայության ստորաբաժանումներում առկա կապի միջոցների հաշվառմանը.

19) մասնակցում է Ծառայության համակարգում ուսումնավարժությունների անցկացմանը.

20) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է իրեն հանձնված պետական գույքը.

21) մասնակցում է միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.

22) մասնակցում է փրկարարական ծառայողների մասնագիտական և ծառայողական պատրաստության պարապմունքներին.

23) իր իրավասության շրջանակներում կարգավորում և սպասարկում է Նախարարությանը պատկանող կապի մալուխային տնտեսությունը.

24) մասնակցում է ժամանակակից ռադիոկապի ներդրման մոնտաժային աշխատանքների իրականացմանը.

25) մշակում է Ծառայությունում առկա մալուխային տնտեսության գծապատկերները.

26) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է տեխնիկական միջոցների վերանորոգումը.

27) կազմակերպում է Ծառայության ինքնավար հեռախոսացանցերի սպասարկումը.

28) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է ուղիղ հեռախոսակապ Տնօրենի և Ծառայության ղեկավար կազմի միջև.

29) կազմակերպում է քաղաքային ինքնավար հեռախոսացանցին միացված հեռախոսահամարների սպասարկումը.

30) կազմակերպում է Տնօրենի ներքին հեռախոսակայանի սպասարկումը.

31) իր իրավասության շրջանակներում ներկայացնում է հայտեր՝ տեխնիկական միջոցների վերանորոգման կազմակերպման վերաբերյալ.

32) մասնակցում է Ծառայության ստորաբաժանումների համալիր ուսումնասիրություններին.

33) իր իրավասության շրջանակներում պատրաստում է Նախարարի, Տնօրենի Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանների ու հանձնարարականների նախագծեր.

34) իր իրավասության շրջանակներում վերահսկում է մալուխային տնտեսության սահմանված կարգով շահագործումը.

35) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է իրեն հանձնված պետական գույքը.

36) մասնակցում է Ծառայության համակարգում ուսումնավարժությունների անցկացմանը.

37) առաջարկություններ է ներկայացնում անհրաժեշտ գույքի և գործիքների ձեռքբերման ուղղությամբ.

38) մասնակցում է միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.

39) մասնակցում է փրկարարական ծառայողների մասնագիտական և ծառայողական պատրաստության պարապմունքներին.

40) մասնակցում է Նախարարության, Ծառայության և Վարչության այլ խնդիրների լուծման գործընթացին:

20. Վարչության ծրագրերի ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության կազմակերպման բաժինը, Վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է տեղեկատվական տեխնոլոգիաների՝ Ծառայության համակարգում կիրառման, զարգացման և անվտանգության ապահովման ռազմավարությունները, ինչպես նաև պլանավորում, կազմակերպում և համակարգում է այդ ռազմավարություններից բխող աշխատանքները.

2) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, կարգավորում, սպասարկում և կառավարում է Ծառայության սերվերային տնտեսությունը.

3) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, կարգավորում և սպասարկում է Ծառայության համակարգում կիրառվող անվտանգության տեսախցիկների և անցագրային ռեժիմի ապահովման համակարգերը.

4) ներքին հեռախոսացանցի, ցանցերի, համակարգչային տեխնիկայի սպասարկման և անխափան գործունեության ապահովման նպատակով կազմակերպում և իրականացնում է շուրջօրյա հերթապահություն.

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների հետ.

6) համակարգերում խափանումների, անսարքությունների հայտնաբերման դեպքում իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ.

7) մասնակցում է ավտոմատացված համակարգերի, համակարգչային տեխնիկայի և ծրագրային փաթեթների, կապի սարքերի և սարքավորումների ներդրման, արդիականացման և վերահսկման աշխատանքներին.

8) իր իրավասության շրջանակներում սահմանում է համակարգիչների տեղեկատվական շտեմարաններ, այլ համակարգիչներ մուտքի թույլտվության աստիճանները, մասնակցում ցանցի ընդլայնման աշխատանքներին.

9) ապահովում է համակարգչային տեխնիկայի և ծրագրային փաթեթների անխափան աշխատանքը, առաջարկություններ է ներկայացնում վերջիններիս փոփոխման կամ արդիականացման ուղղությամբ.

10) հետևում է համացանցի, համակարգչային տեխնիկայի և ծրագրային փաթեթների սահմանված կարգով շահագործմանն ու ապահովում դրանց ներդաշնակ աշխատանքը.

11) հետևում է կապի հանգույցների, մալուխային տնտեսության աշխատանքին, իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում առաջացած խափանումների և անսարքությունների վերացման ուղղությամբ.

12) իր իրավասության շրջանակներում պատրաստում է Նախարարի, Տնօրենի հրամանների ու հանձնարարականների նախագծեր.

13) հրահանգավորում է անձնակազմին՝ համակարգերի, ծրագրերի, սարքերի և սարքավորումների ճիշտ ու նպատակային օգտագործման համար.

14) առաջարկություններ է ներկայացնում անհրաժեշտ գույքի և գործիքների ձեռքբերման ուղղությամբ.

15) մասնակցում է միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.

16) մասնակցում է փրկարարական ծառայողների մասնագիտական և ծառայողական պատրաստության պարապմունքներին.

17) մասնակցում է Նախարարության, Ծառայության և Վարչության այլ խնդիրների լուծման գործընթացին:

21. Վարչության ինքնավար կառավարման համակարգերի բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում առաջարկություններ է ներկայացնում տեղեկատվության փոխանակման համակարգերի զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների նոր ստանդարտների ներդրման վերաբերյալ.

2) իր իրավասության շրջանակներում իրականացնում է ինքնավար կառավարման համակարգերի հիմնումը, զարգացումը և դրա աշխատունակության ապահովումը.

3) պարբերաբար ստուգում և հետևում է Ծառայության ավտոմատացված համակարգերի աշխատունակությանը.

4) առաջարկություններ է ներկայացնում անհրաժեշտ գույքի և գործիքների ձեռքբերման ուղղությամբ.

5) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում ինքնավար կառավարման համակարգերի արդիականացման վերաբերյալ.

6) իր իրավասության շրջանակներում պատրաստում է Նախարարի, Տնօրենի Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանների ու հանձնարարականների նախագծեր.

7) մասնակցում է Ծառայության համակարգում ուսումնավարժությունների անցկացմանը.

8) մասնակցում է միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.

9) մասնակցում է Նախարարության, Ծառայության և Վարչության այլ խնդիրների լուծման գործընթացին:

22. Վարչության ծառայության կազմակերպման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մասնակցում է Ծառայության իրավական ապահովմանը, բնագավառի գիտատեխնիկական և նախագծային աշխատանքներին, իր իրավասության սահմաններում, մշակում է օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր, մասնակցում է ծառայողական ու մարտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ-իրավական փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

2) համակարգում է ոլորտին վերաբերող ՀՀ օրենքների, Կառավարության և Վարչապետի որոշումների նախագծերի մշակման գործընթացը.

3) Ծառայության գործունեության կազմակերպման նպատակով մշակում է տարբեր հանձնարարականների ու այլ փաստաթղթերի նախագծեր.

4) ուսումնասիրում, և մեթոդական օգնություն է ցուցաբերում Ծառայության ստորաբաժանումների կողմից ոլորտին վերաբերող փաստաթղթերի մշակման գործում, ներկայացնում է առաջարկություններ.

5) ուսումնասիրում և ներկայացնում է առաջարկություններ՝ այլ մարմինների կողմից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ.

6) Ծառայության տարածքային ստորաբաժանումներում անցկացված համալիր ստուգումների ընթացքում հայտնաբերված թերությունների արձանագրման կապակցությամբ ներկայացնում է համապատասխան դիրքորոշումներ, ցուցաբերում մեթոդական, մասնագիտական օգնություն.

7) հսկողություն է իրականացնում Ծառայության ստորաբաժանումների կողմից ծառայողական և աշխատանքային գործունեության ընթացքում օրինականության, աշխատանքային ու կատարողական կարգապահության պահպանման նկատմամբ՝ կարգապահական խախտումների և այլ իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ ձեռնարկելով համապատասխան միջոցներ.

8) ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտումների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտման նպատակով՝ Տնօրենի (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի) և Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ կատարում է նպատակային և անակնկալ ստուգումներ.

9) ներկայացնում է առաջարկություններ՝ ոլորտում աշխատանքները բարելավելու, ծառայության որակը բարձրացնելու և առավել արդյունավետ դարձնելու նպատակով,.

10) Վարչության ծառայողների և Ծառայության այլ ստորաբաժանումների հետ համատեղ նախապատրաստում է օրինականության, ինչպես նաև ծառայողական կարգապահության ամրապնդմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում՝ իրավախախտում ծնող պատճառների և դրանց առաջացմանը նպաստող պայմանների վերացմանն ուղղված առաջարկություններ.

11) հսկողություն է իրականացնում Ծառայության ստորաբաժանումների կողմից Նախարարի,Տնօրենի և Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանների ու հանձնարարականների կատարման ընթացքի նկատմամբ.

12) հսկողություն է իրականացնում այլ մարմիններից ստացված գրությունների ժամկետների և պատասխան գրությունների ժամանակին ներկայացման նկատմամբ.

13) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին.

14) մասնակցություն է ցուցաբերում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների, ծառայությունների և կազմավորումների, փրկարար ուժերի ու փրկարարական ծառայության ստորաբաժանումների ստեղծման ուղղությամբ տարվող իրավական ապահովման աշխատանքներին և ծառայողների որակավորման գործընթացին.

15) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցությանը, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում համագործակցության համակարգման իրականացմանը, ինչպես նաև բնագավառում կնքվող միջազգային համաձայնագրերի մշակմանը.

16) ներպետական օրենսդրության կատարելագործման և ներդաշնակեցման նպատակով ուսումնասիրում է միջազգային առաջավոր փորձը.

17) իր իրավասության սահմաններում մասնակցում է քաղաքացիների նամակների (առաջարկություններ, դիմում-բողոքներ) ու փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, դրանցում բարձրացված հարցերի ուսումնասիրմանն ու լուծմանը.

18) մասնակցում է Ծառայության անձնակազմի աշխատանքային և սոցիալական հարցերի ու այլ երաշխիքների իրավական ապահովմանը.

19) մշակում և ներկայացնում է առաջարկություններ՝ Ծառայության ստորաբաժանումների մասնագիտական, ծառայողական ու աշխատանքային խնդիրների բարելավման ուղղությամբ.

20) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է փրկարարական ծառայողների նկատմամբ իրականացվող ծառայողական քննություններին:

23. Վարչության ծառայության ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է Ծառայության գործունեության համակարգումը, ընթացիկ և տարեկան միջոցառումների կազմակերպումը, հսկողություն է սահմանում նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ.

2) համակարգում է Ծառայության կողմից ոլորտին առնչվող ծրագրերի իրականացման գործընթացը և ապահովում ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվությունների և անհրաժեշտ տեղեկատվության ներկայացումը.

3) մշակում և ներկայացնում է Ծառայության և Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ և զեկույցներ.

4) հսկողություն է իրականացնում Ծառայության կողմից նախատեսված ուսումնավարժությունների անցկացման գործընթացի նկատմամբ, անհրաժեշտության դեպքում, ցուցաբերում մեթոդական օգնություն՝ ուսումնավարժությունների կազմակերպման փաստաթղթերի մշակման և արդյունքների ամփոփման գործընթացում.

5) ամփոփում և համակարգում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտում ՀՀ համայնքների և կազմակերպությունների կողմից անցկացված ուսումնավարժությունների վերաբերյալ Ծառայության ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվությունը.

6) համակարգում է Ծառայության և այլ պետությունների համանման կառույցների հետ համատեղ միջոցառումների իրականացումն ու ապահովում այդ միջոցառումներին Ծառայության մասնագետների մասնակցությունը.

7) մասնակցում է Ծառայության կողմից արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտի միջազգային ուսումնավարժությունների, վարժանքների, սեմինարների նախապատրաստման և անցկացման գործընթացին.

8) կազմակերպում է Տնօրենի կողմից անցկացվող խորհրդակցությունների, ժողովների և այլ միջոցառումների անցկացումը և ապահովում դրանց վերաբերյալ արձանագրությունների ներկայացումը.

9) հսկողություն է իրականացնում Ծառայության ստորաբաժանումների կողմից Նախարարի և Տնօրենի խորհրդակցությունների արձանագրություններով տրված հանձնարարությունների կատարման ընթացքի նկատմամբ, ներկայացնում է գործընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.

10) իրականացնում է Ծառայության ստորաբաժանումների կողմից ներկայացված տարաբնույթ փաստաթղթերի հավաքը, վերլուծությունը և ամփոփումը՝ Տնօրենին ներկայացնելու նպատակով.

11) համակարգում է Վարչության պատրաստականության բերման միջոցառումների իրականացման գործընթացը.

12) կազմակերպում է Վարչության փրկարարական ծառայողների մասնագիտական պատրաստության պարապմունքների անցկացումը, մասնակցում է այդ պարապմունքներին.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է փրկարարական ծառայության կազմակերպմանը վերաբերող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակմանը.

14) մասնակցում է փրկարարական ծառայողների մարտական և ծառայողական պատրաստականության բարձրացմանը, այդ նպատակով կատարում է ուսումնասիրություններ ու սահմանված կարգով ներկայացնում առաջարկություններ.

15) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության

պաշտպանության միջոցառումների իրականացման ուղղությամբ որոշումների ընդունման նպատակով.

16) իր իրավասության շրջանակներում ուսումնասիրում և ներկայացնում է առաջարկություններ՝ ոլորտին վերաբերող փաստաթղթերի վերաբերյալ.

17) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

18) մասնակցում է փրկարարական ծառայողների մասնագիտական և ծառայողական պատրաստության պարապմունքներին և որակավորման գործընթացին.

19) հսկողություն է իրականացնում Ծառայության ստորաբաժանումների կողմից իրականացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործընթացի նկատմամբ.

20) իրականացնում է Վարչության պատրաստականության բերման միջոցառումներ.

21) իր իրավասության սահմաններում կազմակերպում է Վարչության մասնագիտական և ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

22) կազմակերպում և իրականացնում է Ծառայության տարածքային հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համալիր ուսումնասիրություններ ու ստուգումներ, Ծառայության կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին, այդ ուղղությամբ, ցուցաբերում է մեթոդական, մասնագիտական օգնություն:

24. Վարչության հատուկ պահպանության և պարեկապահակային բաժինն իր իրավասության սահմաններում ապահովում է պահպանությանը, հերթապահությանն ու պարեկապահակային ծառայությանն ուղղված գործունեության իրականացումը:

25. Վարչության հատուկ պահպանության և պարեկապահակային բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է Ծառայության վարչական շենքերի պահպանությունը, այդ շենքերում կազմակերպում և ապահովում է հերթապահություն, վարչական տարածքում՝ պարեկապահակային ծառայություն.

2) հսկողություն է իրականացնում Ծառայության վարչական շենքեր աշխատակիցների, քաղաքացիների, գույքի և այլ նյութական միջոցների մուտքի ու ելքի նկատմամբ, տրամադրում է մուտքի թույլտվություն.

3) ապահովում է Ծառայության տարածքում գտնվող զինանոցի պահպանությունը.

4) արտակարգ իրավիճակների վայրում կազմակերպում և ապահովում է փրկարարական աշխատանքների ճամբարի պահպանությունը, իրեն հանձնարարված տարածքներում՝ պարեկային պահակային ծառայությունը.

5) անհրաժեշտության դեպքում կազմակերպում ու ապահովում է մարդասիրական օգնության, այլ բեռների, փրկարարական աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկայի և սարքավորումների պահպանությունն ու ուղեկցումը.

6) կազմակերպում և իրականացնում է շքերթներին մասնակից՝ Բաժնի արտահաստիքային ցուցակներում ընդգրկվող դրոշակակիրների և գծայինների հավաքագրումն ու շարային պատրաստությունը.

7) Ծառայության ստորաբաժանումներում կատարում է ուսումնասիրություններ, հավաքագրում և Բաժնի արտահաստիքային միավորներում գրանցում է ճամբարների, մարդասիրական օգնության և այլ բեռների պահպանության խմբում ընդգրկվող ծառայողներին.

8) ռազմական գործողությունների կամ ռազմական դրության ժամանակ իր իրավասության սահմաններում իրականացնում է հանձնարարված կառավարման կետերի և այլ օբյեկտների պահպանություն.

9) կազմակերպում և ապահովում է Ծառայության վարչական շենքերի ու տարածքի տեսավերահսկման համակարգի գործունեությունը, առաջարկություններ է ներկայացնում այդ համակարգի բարելավման ուղղությամբ.

10) տիրապետում և տնօրինում է Ծառայության վարչական շենքերում տեղադրված տեսավերահսկման և անցագրային սարքավորումներում առկա տեղեկատվությունը:

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ՎԱՐՉՈՒԹՅԱՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Ծառայության կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ արդյունավետ կառավարումը, ահազանգերի սպասարկումը, հետևանքների վերացման կառավարումը, իրականացնում Նախարարության, այլ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների տեղեկատվական շուրջօրյա ապահովումը ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների բնագավառում:

2. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով ու այլ իրավական ակտերով:

3. Կենտրոնին հանձնարարականներ և հրամաններ տալիս են Ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Կենտրոնի գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Կենտրոնի՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Կենտրոնի ծառայողները փրկարարական ծառայողներ և քաղաքացիական ծառայողներ են:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Կենտրոնի նպատակներն են՝

1) խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում ճգնաժամերի և արտակարգ իրավիճակներում կառավարման օպերատիվության ապահովումը.

2) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կառավարման մարմինների փոխհամաձայնեցված և ներդաշնակ գործողությունների ապահովումը.

3) արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում արձագանքման ժամանակի զգալի կրճատումը, ներգրավված ուժերի գործունեության և միջոցների կիրառման արդյունավետության բարձրացումը:

7. Կենտրոնի խնդիրներն են՝

1) ՀՀ-ում արտակարգ իրավիճակների բնագավառում օպերատիվ իրավիճակի շուրջօրյա վերահսկումը.

2) արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում Նախարարության, Նախարարության ստորաբաժանումների, պետական մարմինների ղեկավարների և բնակչության, Կենտրոնում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների ժամանակին ազդարարումը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով նախատեսված շրջանակներում՝ համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

3) իր իրավասության սահմաններում ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում ու պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման ապահովումը.

4) իր իրավասության սահմաններում ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների առաջացման դեպքում Նախարարության ուժերի արձագանքման, ինչպես նաև այլ նախարարությունների և գերատեսչությունների ուժերի ներգրավման կազմակերպումը.

5) ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության ժամանակ Ծառայության տարածքային ստորաբաժանումների ճգնաժամային կառավարման կենտրոնների գործունեության համակարգումն ու ներդաշնակ աշխատանքի ապահովումը.

6) արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգերի սահմանված կարգով սպասարկումը.

7) ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության ժամանակ տեղեկատվական հոսքերի կառավարումը, ինչպես նաև ամենօրյա ռեժիմով քաղաքացիներից ստացված հարցումների, բողոքների և առաջարկների վերաբերյալ զանգերի սպասարկումն արդյունավետ իրականացնելու նպատակով «Թեժ գծի» կանոնավոր աշխատանքի ապահովումը.

8) ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում տարբեր մակարդակներում գործող կամ ստեղծվող հանձնաժողովների հետ համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակման ապահովումը.

9) Նախարարության, այլ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, բնակչության շուրջօրյա տեղեկատվական ապահովումն արտակարգ իրավիճակների բնագավառում.

10) ճգնաժամային և արտակարգ իրավիճակների ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության ընդունումը, իրավասության սահմաններում՝ գնահատումը և նվազեցման ուղղությամբ որոշումների ընդունումը.

11) արտակարգ իրավիճակներում Կենտրոնում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների հետ/միջև արդյունավետ փոխհամագործակցության կազմակերպումը.

12) բնակչության պաշտպանության բնագավառում մշտադիտարկման տվյալների մշակումը, հնարավոր հետևանքների հնարավորինս ճշգրիտ կանխատեսումն ու մոդելավորումը.

13) արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծությունը, վիճակագրության վարումն ու համապատասխան զեկույցների, հաշվետվությունների, վերլուծությունների, տեղեկատվության ներկայացումը շահագրգիռ պաշտոնատար անձանց և ծառայություններին.

14) ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում տեղեկատվական շտեմարանների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

15) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների առաջացման ժամանակ բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Նախարարության միասնական պետական քաղաքականության իրականացմանը:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Կենտրոնն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) սահմանված պարբերականությամբ և ժամկետներում կապ է հաստատում մշտադիտարկում իրականացնող ՀՀ պետական մարմիններում գործող ծառայությունների հետ՝ ըստ առնչության ձեռք բերելով տվյալներ և տեղեկատվություն հանրապետության տարածքում օպերատիվ իրավիճակի վերաբերյալ.

2) իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման գործում, ապահովում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

3) տիրապետում է մշտադիտարկման արդյունքներին՝ համակարգելով դրանք թվային քարտեզագրական համակարգում, Կենտրոնի շտեմարաններում.

4) արտակարգ իրավիճակների առաջացման, առաջացման սպառնալիքի, կանխման և կանխարգելման, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է Նախարարության ու Նախարարության ստորաբաժանումների

ղեկավարության, պետական մարմինների ղեկավարների, Կենտրոնում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների ու բնակչության՝ ժամանակին ազդարարումն ու իրազեկումը.

5) ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման դեպքում սահմանված կարգով կազմակերպում է իրավասության սահմաններում՝ Նախարարության, այլ նախարարությունների և գերատեսչությունների ուժերի արձագանքումն ու միջոցների ներգրավումը.

6) արտակարգ իրավիճակների առաջացման, առաջացման սպառնալիքի դեպքում ապահովում է միջազգային պայմանագրերի շրջանակներում համապատասխան կազմակերպությունների իրազեկումը.

7) արտակարգ իրավիճակներում համագործակցում է Կենտրոնում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների հետ՝ ապահովելով պետական կառավարման համակարգի շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների միջև ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին փոխանակումը՝ ուժերի և միջոցների անհրաժեշտ ծավալով ներգրավման, տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման, ստեղծված իրավիճակի տիրապետման, բնակչության իրազեկման, ազդարարման ու նշված գործընթացների ապահովմանն ուղղված որոշումների կայացման և իրականացման հարցերով.

8) սահմանված կարգով ընդունում և գրանցում է բնակչությունից, ծառայություններից, կազմակերպություններից ստացվող արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգերն ու տեղեկատվությունը.

9) ձեռք է բերում անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն, տվյալներ ստեղծված իրավիճակը գնահատելու և որոշում կայացնելու համար, ընդունում է որոշում և սահմանված կարգով կազմակերպում ստեղծված իրավիճակին համարժեք արձագանքում.

10) Կենտրոնում գրանցված տեղեկատվությունն ու տվյալները սահմանված կարգով փոխանցում է շահագրգիռ ծառայություններին, ստորաբաժանումներին և պաշտոնատար անձանց.

11) հետևում է ուժերի արձագանքման ընթացքին և տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն՝ արձագանքումն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ.

12) ահազանգերի սպասարկման, արձագանքման, ազդարարման և իրազեկման գործընթացները սահմանված կարգով իրականացնելու համար նպատակային կիրառում է տեղեկատվական շտեմարանները, ծրագրային փաթեթները, կապի միջոցները, սարքերն ու սարքավորումները.

13) ձևավորում, ամփոփում և սահմանված կարգով ներկայացնում է տեղեկատվություն ու տվյալներ Կենտրոնում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների մասին.

14) իր իրավասության սահմաններում ահազանգողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի վերաբերյալ.

15) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն, տվյալներ Ծառայության հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների քանակի, մարտունակության և գտնվելու վայրի վերաբերյալ.

16) «թեժ գծով» ու Ծառայության կայքի միջոցով ստանում, գրանցում և տրամադրում է տեղեկատվություն՝ ուղղված հնարավոր խուճապի կասեցմանը, բնակչության իրազեկմանը, հնարավոր մարդկային ու նյութական արժեքների կորուստների կանխմանը, որոնման ու այլ փրկարարական և հակաճգնաժամային գործընթացների արդյունավետության բարձրացմանը.

17) ստեղծում և պարբերաբար արդիականացնում է հանրապետությունում արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ շտեմարաններ.

18) դիտարկում և շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց ներկայացնում է հանրապետությունում գրանցված արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների մշտադիտարկման արդյունքների վերլուծություն և կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվություն, հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների, հետազոտությունների, մոնիթորինգային տվյալների, արդյունքների և կանխատեսումների մասին.

19) առաջարկություններ է ներկայացնում մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև տարաբնույթ ոլորտներում և արտակարգ իրավիճակներում արդյունավետ կիրառման ուղղությամբ.

20) սահմանված կարգով մշակում, ձևավորում և Ծառայության կայքում ներկայացնում է տեղեկատվություն ու տվյալներ ՀՀ տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների, իրականացված մոնիթորինգների, դրանց արդյունքների և կանխատեսում-ների մասին.

21) կազմակերպում է ըստ անհրաժեշտ ուղղությունների վիճակագրական տվյալների ձեռքբերումը, իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և փոխանակման գործում.

22) առաջարկություններ է ներկայացնում արտակարգ իրավիճակների ոլորտում վիճակագրության վարման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև վիճակագրական տվյալների համապատասխան ոլորտներում արդյունավետ կիրառման ուղղությամբ.

23) միջազգային պայմանագրերի շրջանակներում համագործակցում է համապատասխան կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգով փոխանակելով տեղեկատվություն ՀՀ-ում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում՝ համապատասխան փոխօգնության ցուցաբերման վերաբերյալ.

24) իրականացնում է ՀՀ և միջազգային մամուլի՝ Ծառայության գործունեությանն առնչվող ոլորտների մշտադիտարկում.

25) մասնակցում է Ծառայության և Կենտրոնի այլ խնդիրների լուծման գործընթացին.

26) Նախարարի, Ծառայության տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Կենտրոնը կառավարում է Տնօրենը:

10. Կենտրոնի աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

11. Կենտրոնի անմիջական ղեկավարումը և գործունեության կազմակերպումն իրականացնում է Կենտրոնի պետը:

12. Կենտրոնի պետը ղեկավարում է Կեբնտրոնի ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

13. Կենտրոնի պետին անմիջականորեն ենթակա են Կենտրոնի պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

14. Կենտրոնի պետը պատասխանատու է Կենտրոնի առջև դրված խնդիրների և Կենտրոնին վերապահված գործառույթների իրականացման համար:

15. Կենտրոնի պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

16. Կենտրոնի ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

17. Կենտրոնի պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Կենտրոնի պետի տեղակալը:

5. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

18. Կենտրոնի աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

19. Կենտրոնն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Օպերատիվ հերթափոխերի բաժին.
2) Մոնիթորինգի և կանխատեսման բաժին.
3) Տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժին.
4) «911» ահազանգման կենտրոն:

20. Կենտրոնի օպերատիվ հերթափոխերի բաժինը, Կենտրոնի նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) սահմանված կարգով ընդունում և գրանցում է բնակչությունից, ծառայություններից, կազմակերպություններից ստացվող արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի,

պատահարների վերաբերյալ ահազանգերն ու տեղեկատվությունը, իր իրավասության սահմաններում տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն.

2) արտակարգ իրավիճակի առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում նախապատրաստում է առաջարկություններ՝ անհրաժեշտ հաշվարկների ներգրավման վերաբերյալ և ներկայացնում ղեկավարությանը՝ համապատասխան որոշումների կայացման համար.

3) սահմանված կարգով կազմակերպում է արձագանքում Կենտրոնում գրանցված արտակարգ իրավիճակներին, արտակարգ դեպքերին, պատահարներին՝ իրականացնելով ստեղծված իրավիճակին համարժեք միջոցառումներ.

4) արտակարգ իրավիճակներում, արտակարգ դեպքերի, պատահարների հետևանքների վերացման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների ղեկավարներից ընդունում է զեկույցներ՝ գնահատելով ստեղծված իրավիճակը և ընդունում նպատակային որոշումներ՝ հասցնելով դրանք իրականացնող ստորաբաժանումներին.

5) արտակարգ դեպքի, պատահարի վերաբերյալ ահազանգ գրանցվելու դեպքում սահմանված կարգով իրազեկում է շահագրգիռ մարմիններին, ծառայություններին և պաշտոնատար անձանց.

6) արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է Նախարարության և ենթակա ստորաբաժանումների, պետական կառավարման, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, ինչպես նաև Կենտրոնում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների ժամանակին ազդարարումը.

7) ապահովում է արտակարգ իրավիճակներում Կենտրոն ժամանած պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների հետ/միջև փոխհամագործակցությունը, տեղեկատվության փոխանակման, որոշումների կայացման և հետևանքների վերացման արդյունավետ իրականացումը.

8) արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում ապահովում է Ծառայության ուժերի արձագանքման, ինչպես նաև այլ նախարարությունների և գերատեսչությունների ուժերի ներգրավման ու դրանց միջև ներդաշնակ փոխհամագործակցությունը.

9) արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում միջազգային պայմանագրերով նախատեսված շրջանակներում՝ իրականացնում է համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

10) ապահովում է ՀՀ-ում արտակարգ իրավիճակների բնագավառում օպերատիվ իրավիճակի շուրջօրյա հսկումն ու արտակարգ դեպքերի, պատահարների սահմանված կարգով գրանցումը, հաշվառումն ու ամփոփ տեղեկատվության ժամանակին ներկայացումը շահագրգիռ պաշտոնատար անձանց, ծառայություններին, կազմակերպություններին.

11) մշտապես հսկում է ՀՀ-ում օպերատիվ իրավիճակը արտակարգ իրավիճակների բնագավառում՝ թվային քարտեզների վրա անցկացնելով համապատասխան տեղեկատվությունն ու տվյալներն արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ.

12) սահմանված կարգով կազմակերպում է լրացուցիչ ուժերի ներգրավումը.

13) արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում ապահովում է ՀՀ-ում ծավալված միջազգային կազմակերպությունների հետ փոխհամագործակցությունը տեղեկատվության փոխանակման և ժամանած միջազգային ուժերի արդյունավետ կիրառման ուղղությամբ.

14) ներկայացնում է առաջարկություններ ոլորտում ծառայության որակի բարձրացման և շահագրգիռ անձնակազմի ուսուցման գործընթացի բարելավման ուղղությամբ.

15) մասնակցում է Ծառայության և Կենտրոնի այլ խնդիրների լուծման գործընթացին:

21. Կենտրոնի մոնիթորինգի և կանխատեսման բաժինը, Կենտրոնի նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում և ձեռք է բերում ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

2) ստեղծում և պարբերաբար արդիականացնում է հանրապետությունում արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ շտեմարաններ.

3) իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրման և փոխանակման գործում.

4) ըստ սահմանված ձևաչափերի և ժամկետներում դիտարկում ու շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց ներկայացնում է ՀՀ-ում գրանցված արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների մշտադիտարկման արդյունքների վերլուծություն և կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվություն, հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների, հետազոտությունների, մշտադիտարկման տվյալների, արդյունքների և կանխատեսումների մասին.

5) առաջարկություններ է ներկայացնում մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև տարաբնույթ ոլորտներում և արտակարգ իրավիճակներում արդյունավետ կիրառման ուղղությամբ.

6) շահագրգիռ մարմիններին և պաշտոնատար անձանց ժամանակին իրազեկում է հանրապետությունում արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների մշտադիտարկման, մոդելավորման և կանխատեսման արդյունքների ու իրավիճակի հնարավոր վատթարացման մասին.

7) սահմանված կարգով մշակում, ձևավորում և Ծառայության կայքում ներկայացնում է տեղեկատվություն ու տվյալներ՝ ՀՀ տարածքում իրականացված մոնիթորինգների, դրանց արդյունքների և կանխատեսումների մասին.

8) օգտվում է Կենտրոնի, այլ շահագրգիր մարմինների տեղեկատվական բազաներից՝ իրականացնելով տարաբնույթ արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների մոդելավորում.

9) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

10) մասնակցում է Ծառայության, Կենտրոնի այլ խնդիրների լուծման գործընթացին:

22. Կենտրոնի տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժինը, Կենտրոնի նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում է ըստ անհրաժեշտ ուղղությունների վիճակագրական տվյալների ձեռքբերումը, իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և փոխանակման գործում.

2) ստեղծում և պարբերաբար արդիականացնում է ՀՀ-ում արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ շտեմարաններ.

3) իրականացնում է հանրապետությունում արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ տեղեկատվության մշակում և դասակարգում.

4) ըստ սահմանված ձևաչափերի և ժամկետներում վերլուծում ու շահագրգիռ մարմիններին, կազմակերպություններին, պաշտոնատար անձանց տրամադրում է ՀՀ-ում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և հաշվետվություններ.

5) սահմանված կարգով հանրապետության վիճակագրական կոմիտե է ներկայացնում Կենտրոնում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ հաշվետվությունները.

6) առաջարկություններ է ներկայացնում վիճակագրության վարման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև վիճակագրական տվյալների համապատասխան ոլորտներում արդյունավետ կիրառման ուղղությամբ.

7) շահագրգիռ պաշտոնատար անձանց յուրաժամկետ իրազեկում է ՀՀ-ում արտակարգ դեպքերի, պատահարների վիճակագրությունում կտրուկ փոփոխությունների մասին.

8) միջազգային պայմանագրերի շրջանակներում համապատասխան կազմակերպություններին սահմանված կարգով տրամադրում է տեղեկատվություն՝ ՀՀ-ում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ.

9) ամենօրյա ռեժիմով սպասարկում է Ծառայության «Թեժ գիծ»-ը և ստացված զանգերի վերաբերյալ ամսական, կիսամյակային և տարեկան տեղեկանքներ է ներկայացնում է ըստ վերադասության.

10) սահմանված կարգով մշակում, ձևավորում և Ծառայության կայքում զետեղում է տեղեկատվություն ու տվյալներ ՀՀ տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ.

11) իրականացնում է հանրապետության և միջազգային մամուլի՝ Ծառայության գործունեությանն առնչվող ոլորտների մշտադիտարկում.

12) Ծառայության կայքում սահմանված կարգով ապահովում է տեղեկատվության՝ օտար լեզուներով ներկայացումը.

13) առաջարկություններ է ներկայացնում Ծառայության կայքի արդիականացման, տեղեկատվության ապահովման գործընթացների բարելավման և նպատակային կիրառման ուղղությամբ.

14) մասնակցում է Ծառայության և Կենտրոնի այլ խնդիրների լուծման գործընթացին:

23. Կենտրոնի «911» ահազանգման կենտրոնը, Կենտրոնի նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) սահմանված կարգով ընդունում և գրանցում է բնակչությունից, ծառայություններից, կազմակերպություններից ստացվող արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ, ինչպես նաև սոցիալ-կենցաղային բնույթի ահազանգերն ու տեղեկատվությունը.

2) հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռք է բերում անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն, տվյալներ ստեղծված իրավիճակը գնահատելու և որոշում կայացնելու համար.

3) ստացված և ճշգրտված տեղեկատվության հիման վրա ընդունում է որոշում և սահմանված կարգով կազմակերպում ստեղծված իրավիճակին համարժեք արձագանքում.

4) գրանցված տեղեկատվությունն ու տվյալները սահմանված կարգով փոխանցում է շահագրգիռ ծառայություններին, ստորաբաժանումներին և պաշտոնատար անձանց.

5) հետևում է ուժերի արձագանքման ընթացքին և տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն արձագանքումն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ.

6) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

7) նպատակային կիրառում է տեղեկատվական շտեմարանները, ծրագրային փաթեթները, կապի միջոցներն ահազանգերի սպասարկման, արձագանքման կազմակերպման, ազդարարման և իրազեկման գործընթացները սահմանված կարգով իրականացնելու համար.

8) շուրջօրյա հետևում է հատուկ, կարևորագույն օբյեկտներում գործող ինքնաշխատ հակահրդեհային համակարգի աշխատանքին.

9) ձևավորում, ամփոփում և սահմանված կարգով ՕՀ պետին (այլ շահագրգիռ մարմիններին, ծառայություններին, պաշտոնատար անձանց) է ներկայացնում տեղեկատվություն և տվյալներ գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների մասին.

10) իր իրավասության սահմաններում ահազանգողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի վերաբերյալ.

11) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն և տվյալներ Ծառայության հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների քանակի, մարտունակության և գտնվելու վայրի վերաբերյալ.

12) վերլուծում է գրանցվող ահազանգերի բնույթը, թվաքանակը և սահմանված կարգով ներկայացնում հաշվետվություններ կատարված աշխատանքների վերաբերյալ.

13) ներկայացնում է առաջարկություններ ծառայության որակի բարձրացման ուղղությամբ.

14) մասնակցում է Ծառայության և Կենտրոնի այլ խնդիրների լուծման գործընթացներին:

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) փրկարարական ուժերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է փրկարար ուժերի պատրաստության, փրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների փրկարարական ստորաբաժանումների, ինչպես նաև հասարակական, կամավորական փրկարարական միավորումների պատրաստությունն ու համակարգումը:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար).

2) կանոնադրությունը հաստատում է Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն).

3) ծառայողները փրկարարական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

4. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են Նախարարը, Տնօրենը և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1) փրկարար ուժերի մշտական պատրաստականության ապահովումը.

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

3) ՀՀ տարածքում գործող փրկարար ուժերի գործունեության համակարգումը.

4) փրկարար ուժերի մասնագիտական մակարդակի պահպանումը և բարձրացումը.

5) հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների մարտավարության մակարդակի մշտական բարձրացումը, ուժերի և միջոցների միասնական կառավարումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կատարման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում և իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարա-վերականգնողական, հատուկ բարդության և մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքներ.

2) մշակում է իրավական ակտերի նախագծեր, մասնակցում է ծառայողական ու մասնագիտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակմանը.

3) իր իրավասության սահմաններում մասնակցում է միջազգային ծրագրերի և պայմանագրերի մշակմանը.

4) մշակում է ՀՀ-ում փրկարար ուժերի գործունեությանը, փրկարարական աշխատանքների իրականացմանը, փրկարար ուժերի ստեղծմանը, ինչպես նաև հակահրդեհային իրավիճակի վերլուծության հիման վրա հրդեհների արդյունավետ մարմանն ուղղված հանրապետական և տեղական նպատակային ծրագրեր՝ համակարգելով ու հսկողություն իրականացնելով դրանց կատարման նկատմամբ.

5) մշակում և ներկայացնում է առաջարկություններ՝ հանրապետության տարածքում փրկարարական գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ և կատարում վերլուծություններ ու ներկայացնում Տնօրենին.

6) իր իրավասությունների շրջանակներում մասնակցում է Ծառայության տարածքային ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրություններին և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նրանց մեթոդական օգնության ցուցաբերմանը.

7) կազմակերպում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գերատեսչական հակահիդեհային ծառայությունների, հասարակական, կամավորական փրկարարական կազմավորումների արտագնա հրշեջ-փրկարարական տեխնիկայի հաշվառում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում առաջարկություն, փրկարարական, վթարա-փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում նրանց ներգրավման ուղղությամբ.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ ղեկավարում ու համակարգում է պետական, գերատեսչական փրկարարական ուժերի և հասարակական կազմավորումների գործողությունները.

9) մշակում է առաջարկություններ՝ բնակավայրերը և կազմակերպությունները պահպանող փրկարարական, հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ստեղծման և համալրման վերաբերյալ.

10) նախապատրաստում և կազմակերպում է փրկարարների ու փրկարարական կազմավորումների որակավորումը.

11) մասնակցում է փրկարարական ծառայողների մասնագիտական և ծառայողական պատրաստության բարձրացմանը, այդ նպատակով կատարում է ուսումնասիրություն ու սահմանված կարգով ներկայացնում առաջարկություն.

12)մշակում և Տնօրենի հաստատմանն է ներկայացնում փրկարարական ուժերի անձնակազմի տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանն ուղղված ուսումնական թեմատիկ պլանները և հսկողություն իրականացնում պարապմունքների արդյունավետ անցկացման ուղղությամբ.

13) փրկարարական ուժերի տեսական և գործնական հմտությունները կատարելագործելու, մշտական բարձր պատրաստականություն ապահովելու նպատակով կազմակերպում և անցկացնում է ուսումնավարժություններ, սեմինարներ, գործնական պարապմունքներ և դասախոսություններ՝ գերատեսչական, հասարակական, կամավորական և համայնքային փրկարարական կազմավորումների ընդգրկմամբ.

14) Նախարարի, Տնօրենի հանձնարությամբ մասնակցում է արտակարգ իրավիճակների արձագանքման թեմաներով կազմակերպված միջազգային կոնֆերանսներին և գիտաժողովներին.

15) Նախարարի կամ Տնօրենի հանձնարարությամբ՝ ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն, կազմակերպում է հանրապետության փրկարար ուժերի մասնակցությունը միջազգային փրկարարական աշխատանքներին.

16) ուսումնասիրում և վերլուծում է ՀՀ և արտասահմանյան երկրների տարածքներում տեղի ունեցած խոշոր արտակարգ իրավիճակները, դրանց վերացման ընթացքն ու մարտավարական գործողությունները, մշակում ուժերի փոխգործողությունների արդյունավետությանն ուղղված միջոցառումներ.

17)աջակցում է հրշեջ-փրկարարական ջոկատների կողմից կազմակերպությունների հրդեհաշիջման օպերատիվ պլանների ու քարտերի կազմմանը.

18) կազմակերպում և մասնակցում է փրկարարական ուժերի մասնագիտական պատրաստության ծրագրերի մշակման և ուսուցման կազմակերպման աշխատանքներին.

19) իր իրավասության սահմաններում մասնակցում է փրկարարական բնագավառի պետական միասնական քաղաքականության մշակմանը.

20) իրականացնում է ջրաղբյուրների հաշվառում.

21) իրականացնում է ՀՀ տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքներ.

22) իրականացնում է փրկարարների և փրկարարական կազմավորումների (անկախ նրանց կարգավիճակից և գերատեսչական պատկանելությունից) հաշվառում.

23) իր իրավասության շրջանակում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցությանը, ինչպես նաև համակարգում է Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) շրջանակներում միջազգային համագործակցությունը.

24) կազմակերպում և հսկողություն է իրականացնում «INSARAG»-ի արտաքին որակավորումն անցած միջազգային հայկական քաղաքային որոնողափրկարարական թիմի և ՀՀ մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի վերապատրաստման գործընթացի նկատմամբ.

25) կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ պատանի հրշեջ-փրկարարների հավաքական թիմերի ստեղծման, ամենամյա հանրապետական մարզական առաջնության և պարապմունքների կազմակերպման ուղղությամբ, միջազգային մրցաշարերին մասնակցելու նպատակով կազմակերպում է թիմի նախապատրաստման գործընթացը.

26) իր իրավասության սահմաններում՝ օրվա ցանկացած ժամի, իրականացնում է Ծառայության հերթապահ ստորաբաժանումների ստուգումներ՝ սահմանված կարգով ներկայացնելով համապատասխան հաշվետվություններ, զեկույցներ, եզրակացություններ, առաջարկություններ.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, բարձրացված հարցերի լուծմանը.

28) Նախարարի, Տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

8. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

9. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

10. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

11. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

12. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

13. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

14. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

15. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

16. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Հրշեջ-փրկարարական պատրաստության բաժին.

2) Փրկարարական ուժերի համակարգման բաժին.

3) «ՀԱԷԿ»-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատ.

4) Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժին.

5) Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոն:

20. Վարչության հրշեջ-փրկարարական պատրաստության բաժինը՝ Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների մասնագիտական պատրաստությանն ու ծառայության կազմակերպմանը վերաբերող փաստաթղթերի մշակում և հաստատման ներկայացում.

2) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների անձնակազմի պատրաստման և վերապատրաստման կազմակերպում ու դրանց նկատմամբ հսկողության իրականացում.

3) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների շարքային և կրտսեր հրամանատարական կազմի ամենօրյա պարապմունքների թեմատիկ պլանի կազմում և հսկողության իրականացում՝ պլանով նախատեսված պարապմունքների անցկացման նկատմամբ.

4) փրկարար ուժերի գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակում, ներկայացում հաստատման և այդ իրավական ակտերով նախատեսված միջոցառումների համակարգում և կատարում.

5) անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականությունից բխող աշխատանքների իրականացում.

6) մասնակցություն միջազգային համագործակցության շրջանակներում փրկարար ուժերի գործունեության ոլորտին առնչվող ծրագրերի կազմման աշխատանքներին.

7) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների հրդեհաշիջման տարածքներում առաջացած հրդեհների հաշվառման իրականացում.

8) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների անձնակազմին տեսական և գործնական օգնության ցուցաբերում և մասնակցություն ջոկատների ծառայողական գործունեության համալիր ստուգումներին.

9) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների կողմից ելքերի վերաբերյալ հաշվետվությունների ամփոփում և դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացում.

10) ստորաբաժանումների հրշեջ-փրկարարական հաշվարկներում գտնվող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների տեխնիկական վիճակի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության ամփոփում և ներկայացում Տնօրենին.

11) նոր հրշեջ հիդրանտների տեղադրման, ինչպես նաև՝ վնասված և ասֆալտապատման հետևանքով գետնի տակ մնացած հրշեջ հիդրանտների վերանորոգման, իրենց ձևով և տրամագծով հրշեջ ավտոմեքենաների մարտավարատեխնիկական տվյալներին չհամապատասխանող հրշեջ հիդրանտները գործածելի դարձնելու և գյուղական բնակավայրերում ջրավազանների կառուցման ուղղությամբ աշխատանքների իրականացում.

12) հրշեջ-շարային մարզաձևի մարզային ու հանրապետական առաջնությունների անցկացում.

13) փրկարարական ծառայողների ֆիզիկական պատրաստվածության գործընթացի կազմակերպում և համակարգում.

14) տարբեր մարզաձևերից մրցաշարերի կազմակերպում և անցկացում.

15) Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

21. Վարչության փրկարարական ուժերի համակարգման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) փրկարարական կազմավորումների և փրկարարների որակավորման գործընթացի կազմակերպում և իրականացնում, ինչպես նաև որակավորման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում (որակավորվողներից քննությունների ընդունման կազմակերպում, ներկայացում որակավորման հանձնաժողովին, փրկարարական գրքույկների և վկայականների լրացում, կրծքանշանների հանձնման կազմակերպում).

2) «INSARAG»-ի արտաքին որակավորումն անցած միջազգային հայկական և ՀՀ մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի վերապատրաստման գործընթացի կազմակերպում և գործընթացի նկատմամբ հսկողության իրականացում.

3) ՀՀ տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում.

4) արտակարգ իրավիճակներում փրկարար ուժերի, գերատեսչական և կամավոր փրկարարական կազմավորումների գործունեության կազմակերպում և համակարգում, ինչպես նաև ներգրավված միջազգային ուժերի արդյունավետ փոխհամագործակցություն.

5) ՀՀ տարածքում գործող փրկարարական ուժերի գույք-սարքավորումների, տեխզինվածության և անձնակազմի հաշվառում ու համակարգում.

6) փրկարար ուժերի պատրաստականության մոնիթորինգի պարբերաբար անցկացում և վերջինիս արդյունքներով առաջարկությունների ներկայացում.

7) Վարչության ամսական աշխատանքային պլանների մշակում և շաբաթական, ամսական, եռամսակային, կիսամյակային, տարեկան կատարված աշխատանքների հաշվետվությունների կազմում և ներկայացում Ծառայության համապատասխան ստորաբաժանմանը.

8) Վարչության տարեկան հիմնական միջոցառումների պլանի մշակում.

9) իր իրավասության շրջանակում մասնակցում է բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցությանը, միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող վարծանքներին, աշխատաժողովներին, հանդիպումներին, սեմինարներին և քննարկումներին.

10) համակարգում է Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) շրջանակներում միջազգային համագործակցությունը.

11) համագործակցության իրականացում՝ ՀՀ-ում գործող մարզական կազմակերպությունների հետ.

12) պատանի հրշեջ-փրկարարների հավաքական թիմերի ստեղծման, ամենամյա հանրապետական մարզական առաջնության և պարապմունքների կազմակերպման ուղղությամբ աշխատանքների իրականացում, միջազգային մրցաշարերին մասնակցելու նպատակով թիմի նախապատրաստման գործընթացի իրականացում.

13) Ծառայության տարածքային ստորաբաժանումների ծառայողների և ՀՀ մարզերի մարզպետարանների կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ ՀՀ մարզերի 200 և ավելի աշակերտ ունեցող դպրոցներում պատանի հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի համակարգում.

14) մրցաշարերի կազմակերպում և իրականացում.

15) Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

22. Վարչության «ՀԱԷԿ-ի» պահպանության հատուկ հրշեջ ջոկատը՝ Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում և իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարա-վերականգնողական, հատուկ բարդության և մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքներ.

2) մշակում է իրավական ակտերի նախագծեր, մասնակցում է ծառայողական ու մասնագիտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակմանը.

3) անձնակազմի տեսական և գործնական հմտությունները կատարելագործելու, մշտական բարձր պատրաստականություն ապահովելու նպատակով կազմակերպում և իրականացնում է վարժանքներ՝ գերատեսչական, հասարակական, կամավորական և համայնքային փրկարարական կազմավորումների ընդգրկմամբ.

4) պարբերաբար ուսումնասիրում է օբյեկտում առկա հրդեհաշիջման սկզբնական միջոցների անհրաժեշտ քանակությունը և հակահրդեհային ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակը.

5) անցկացնում է հատուկ տակտիկական ուսումնավարժանքներ՝ ներգրավելով Ջոկատում առկա հրշեջ տեխնիկան և գույք-սարքավորումները.

6) հրդեհային անվտանգության ապահովման նպատակով փոխհամագործակցում է օբյեկտի ղեկավարության, անվտանգության բաժնի և մյուս շահագրգիռ ծառայությունների հետ.

7) օբյեկտի ինժեներական անձնակազմի հետ համատեղ իրականացնում է օբյեկտի հրդեհային անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, կազմակերպում՝ աշխատակիցների հակահրդեհային հրահանգավորում.

8) պարբերաբար ուսումնասիրում է օբյեկտի համապատասխանությունը հրդեհային անվտանգության նորմերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ցուցաբերում է մեթոդական օգնություն՝ բացահայտված խախտումների վերացման հարցերում.

9) ապահովում է հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման գործընթացը՝ արտադրամասերի, տեղամասերի, սարքավորումների, շինարարության, վերանորոգման և կրակային աշխատանքների կատարման ընթացքում.

10) կազմակերպում է օբյեկտի հրդեհային անվտանգության վերաբերյալ ղեկավար մարմինների որոշումների, կարգադրությունների ու ցուցումների իրականացմանն ուղղված աշխատանքները.

11) օբյեկտի ղեկավարության քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ՝ հակահրդեհային ջրամատակարարման, կապի միջոցների, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերի ու սարքավորուների վերազինման վերաբերյալ:

12) Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

23. Վարչության հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում ձեռք է բերում տեղեկատվություն՝ արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ՝ մշակելով համապատասխան գործողությունների ալգորիթմեր՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների առաջացման դեպքում արդյունավետ արձագանքում և հետևանքների վերացման գործընթաց կազմակերպելու համար.

2) սահմանված կարգով արձագանքում է արտակարգ իրավիճակներին, արտակարգ դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

3) դեպքի վայրում գտնվող և ժամանող ուժերին ներգրավում է ստեղծված իրավիճակի բացահայտմանը, արտակարգ իրավիճակներում հետևանքերի արագ և արդյունավետ վերացման համար.

4) արտակարգ իրավիճակներում, արտակարգ դեպքերի, պատահարների վայրում հետևանքերի վերացման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների ղեկավարներից

ընդունում է զեկույցներ՝ գնահատելով ստեղծված իրավիճակը և ընդունում նպատակային որոշումներ՝ հասցնելով դրանք իրականացնող ստորաբաժանումներին.

5) սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում շահագրգիռ պաշտոնատար անձանց՝ արտակարգ իրավիճակի, արտակարգ դեպքի, պատահարի վերաբերյալ.

6) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակներում, արտակարգ դեպքերի, պատահարների վայրում հսկում է Ծառայության ստորաբաժանումների գործողությունները, գնահատում դրանց արդյունավետությունը, կայացնում՝ համապատասխան որոշումներ՝ աշխատանքները նպատակաուղված իրականացնելու մասով.

7) սահմանված կարգով կազմակերպում է լրացուցիչ ուժերի ներգրավումը.

8) իր իրավասության սահմաններում արտակարգ դեպքի, պատահարի վայրում որոշումներ է կայացնում աշխատանքներն սկսելու, ավարտելու, ժամանակավոր կամ մասնակի դադարեցնելու վերաբերյալ.

9) կազմակերպում է արտակարգ դեպքի, պատահարի վայրի սահմանազատումը.

10) իր իրավասության սահմաններում արտակարգ դեպքի, պատահարի վայրում կազմակերպում է Ծառայության և շահագրգիռ այլ ծառայություններից ժամանած ստորաբաժանումների ներդաշնակ աշխատանքը.

11) որոշում է կայացնում արտակարգ դեպքի, պատահարի վայրում լուսանկարահանումներ (տեսանկարահանումներ) կատարելու անհրաժեշտության վերաբերյալ, սահմանում այդ գործընթացի առանձնահատկությունները.

12) ներկայացնում է առաջարկություններ ոլորտում ծառայության որակի բարձրացման ուղղությամբ.

13) հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների կողմից կազմվող հրդեհաշիջման օպերատիվ պլանների և հրդեհաշիջման քարտերի կազմման նկատմամբ հսկողության իրականացում.

14) իրականացնում է հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների կողմից կազմվող հրդեհների վերլուծությունների հաշվառում և հսկողության իրականացում՝ դրանց կատարման նկատմամբ.

15) իր իրավասության սահմաններում՝ օրվա ցանկացած ժամի, իրականացնում է Ծառայության հերթապահ ստորաբաժանումների ստուգումներ՝ սահմանված կարգով ներկայացնելով համապատասխան հաշվետվություններ, զեկույցներ, եզրակացություններ, առաջարկություններ.

16) մշակում է ուսումնամեթոդական փաստաթղթեր, դիդակտիկ և այլ բնույթի ուսումնական նյութեր ու մեթոդական օգնություն ցուցաբերում Ծառայության հերթապահություն իրականացնող ստորաբաժանումներին.

17) ուսումնավարժությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ աշխատանքների իրականացում.

18) Ծառայության հրշեջ-փրկարարական և հատուկ հրշեջ ջոկատների կողմից հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում և հսկողության իրականացում՝ դրանց կատարման նկատմամբ.

19) Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

24. Վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) արտակարգ պատահարների, դեպքերի, արտակարգ իրավիճակների ժամանակ իրականացնում է փրկարարական, ջրափրկարարական, լեռնափրկարարական, հրդեհաշիջման, որոնողափրկարարական, հատուկ բարդության և մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքներ.

2) աղետի գոտում իրականացնում է ընդհանուր հետախուզություն, այդ թվում հետախույզ կինոլոգիական ջոկատի և անօդաչու թռչող սարքավորումների մասնագիտացված խմբի ուժերով.

3) աղետի գոտում իրականացնում է տուժածների և նյութական արժեքների տարահանում.

4) տուժածներին ցուցաբերում է առաջին օգնություն.

5) իրականացնում է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներ.

6) ընդունում է արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ հաղորդագրություններն ու արձագանքում դրանց.

7) Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 7
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) քաղաքացիական պաշտպանության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերի, ներքին պլանների մշակման ու դրանց կատարման ապահովման, տարահանման պլանների և ծրագրերի մշակման, քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով բնակչության ուսուցման և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստմանն ուղղված միջոցառումներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Փրկարար ծառայության մասին», «Փրկարար ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար).

2) կանոնադրությունը հաստատում է Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն).

3) ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

4. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են Նախարարը, Տնօրենը և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության նպատակներն ու խնդիրներն են՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության բնագավառի քաղաքականության մշակման և իրականացման կազմակերպման աշխատանքներին.

3) քաղաքացիական պաշտպանության և ռազմական դրության փոխադրման միջոցառումների պլանավորումը.

4) քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման գործընթացի կազմակերպումը, համակարգումը և դրանց նկատմամբ հսկողության սահմանումը.

5) մասնակցություն քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով կառավարման մարմինների պատրաստմանը և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

6) ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի ու առողջության փրկման և ապահովման գործընթացի կազմակերպումը.

7) քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության փոխադրման համար առաջարկությունների ներկայացում.

8) քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև տարածքների, բնակչության, նյութական և մշակութային արժեքների պաշտպանության, համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը.

9) մասնակցությունը Ծառայության զորահավաքային նախապատրաստության աշխատանքների կազմակերպմանը և համակարգմանը.

10) մասնակցությունը Ծառայության փրկարարական ծառայողների մարտական պատրաստության կազմակերպմանը և համակարգմանը.

11) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության իրականացման աշխատանքների կազմակերպումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիական պաշտպանության բնագավառի իրավական կարգավորման նպատակով իրավական ակտերի նախագծերի մշակումն ու դրանց մշակման համար առաջարկությունների ներկայացումը.

2) քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկության ներկայացումը.

3) ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի հետ Ծառայության՝ պատերազմի ժամանակ գործելու և զորահավաքային խնդիրների համաձայնեցումը.

4) քաղաքացիական պաշտպանության, համապատասխան աշխատանքային ռեժիմի փոխադրման ներքին պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը.

5) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների կազմակերպմանը.

6) ՀՀ տարածքում տեղակայված ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ճշգրտումը.

7) քաղաքացիական պաշտպանության թեմաներով ուսումնավարժությունների (վարժանքների) նախապատրաստման և անցկացման կազմակերպումը.

8) քաղաքացիական պաշտպանության բնագավառում Պաշտպանության նախարարության, ՆԳՆ Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության և Ծառայության միջև փոխգործողությունների կազմակերպումը.

9) իր իրավասությունների սահմաններում քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը.

10) իր իրավասությունների սահմաններում քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային համագործակցության իրականացումը, ինչպես նաև համակարգում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում միջազգային համագործակցության իրականացումը

11) մասնակցություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց, փրկարարական ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և բնակչության քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով նախապատրաստմանը.

12) զորահավաքային նախապատրաստության, զորահավաքի և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

13) իր իրավասությանն առնչվող, Ծառայության գործունեությունը կանոնակարգող, հրամանների, հանձնարարականների և այլ փաստաթղթերի մշակումը, ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը.

14) Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաների մշակումը և ժամանակին ճշգրտումը.

15) Վարչության անձնակազմի մասնագիտական պատրաստության պլանավորումը և իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության ուժերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակումը.

17) քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների հաշվառման, պահպանման, պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրման միջոցառումների կազմակերպումը.

18) մասնակցություն վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանների և ծրագրերի մշակմանը և դրանց ճշգրտման կազմակերպումը.

19) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության հարցերով տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը, քաղաքացիական պաշտպանության պահուստների ստեղծմանն ու նպատակային օգտագործման կազմակերպմանը.

20) մասնակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման գործընթացի պլանավորմանը, կազմակերպմանը և իրականացմանը, ինչպես նաև վիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

21) պահեստային կառավարման կետերի նորմատիվ պահանջներին համապատասխանության ուսումնասիրությունների անցկացումը, ինչպես նաև դրանք պահանջվող նորմերին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

22) Նախարարի, Տնօրենի և Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

23) «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Պաշտպանության մասին» և «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով տարածքային կառավարման մարմինների համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

8. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

9. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

10. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

11. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

12. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

13. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

14. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

15. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

17. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

18. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժին.

2) Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նախապատրաստման բաժին.

3) Քաղաքացիական պաշտպանության հարցերով կառավարման մարմինների գործունեության համակարգման բաժին.

4) Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոն:

19. Վարչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ՀՀ քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանի մշակում, ճշգրտում.

2) մեթոդական, գործնական օգնություն ցուցաբերում պետական կառավարման համակարգի մարմիններին քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման գործում.

3) Ծառայության և Վարչության աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլանների մշակում, ճշգրտում և մեթոդական օգնության ցուցաբերում Ծառայության ստորաբաժանումներին՝ այդ պլանների մշակման գործում.

4) Ծառայության գործունեությունը համապատասխան աշխատանքային ռեժիմների փոխադրելու գործընթացի կազմակերպում.

5) քաղաքացիական պաշտպանության թեմաներով ուսումնավարժությունների, Ծառայության անձնակազմի հետ անցկացվող առանձնացված շտաբային մարզումների նախապատրաստման և անցկացման կազմակերպում.

6) Ծառայության ստորաբաժանումների կողմից քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

7) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության համակարգի վիճակի համալիր գնահատման կազմակերպմանը և վիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

8) մասնակցություն Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համալիր ուսումնասիրություններին ու ստուգումներին.

9) Վարչության տարեկան, ամսական աշխատանքային պլանների մշակում և պլաններում նշված միջոցառումների կատարման ուղղությամբ հսկողության սահմանում.

10) Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակում.

11) Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաների մշակում և պարբերաբար ճշգրտում.

12) Նախարարի, Տնօրենի հրամանների նախագծերի պատրաստում.

13) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացնում՝ Վարչության պետին.

14) իր լիազորությունների շրջանակներում Ծառայության ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի ստացում.

15) իր իրավասությունների սահմաններում մասնակցություն միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.

16) Տնօրենի, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի և Վարչության պետի հանձնարարությամբ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում:

20. Վարչության քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նախապատրաստման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների կազմակերպում.

2) բնակչության պատսպարման հարցերի բարելավման և պաշտպանական կառույցների ֆոնդի զարգացման վերաբերյալ մասնագիտացված աշխատանքային խմբերի ձևավորման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում.

3) պաշտպանական կառույցների, դրանց տվյալների հաշվառման հսկողության իրականացում և համակարգում.

4) քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների պատրաստականության բերման հսկողության կազմակերպում.

5) բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման ու պատսպարման կազմակերպման և իրականացման հսկողության սահմանում.

6) պահեստային կառավարման կետերի ուսումնասիրությունների անցկացում և դրանք սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

7) «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, քաղաքացիական պաշտպանության օբյեկտների և գույքի պահպանման մասին» պայմանագրերի կնքման և դրանց կատարման վերաբերյալ հսկողության սահմանում.

8) քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների ուսումնասիրությունների անցկացման կազմակերպում և մասնակցություն.

9) քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի, հատուկ կարևորագույն օբյեկտների աշխատողների, դրանց սանիտարական գոտու և սահմանամերձ բնակավայրերի բնակչության անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածության հաշվառման նկատմամբ հսկողության սահմանում.

10) ՀՀ տարածքում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների վերաբերյալ հաշվառման տվյալների ամփոփում.

11) քաղաքացիական պաշտպանության ինժեներական կազմավորումների հաշվառմանան տվյալների ամփոփում.

12) իր լիազորությունների սահմաններում քաղաքացիական պաշտպանության ոլորտի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի նախագծերի մշակում.

13) Բաժնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրա կատարման ընթացքի մասին հաշվետվությունների ու վերլուծությունների մշակում.

14) իր լիազորությունների սահմաններում ՀՀ տարածքում կառուցվող և վերակառուցվող օբյեկտների, կառույցների, տրանսպորտային ուղիների և ինժեներական ցանցերի նախագծերում քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի և կանոնների ներառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

15) քաղաքացիական պաշտպանության պլաններում ինժեներական ապահովման և տարահանման միջոցառումների անցկացման կազմակերպմանը վերաբերող բաժինների մշակման հսկողության սահմանում ու դրանց ճշգրտման կազմակերպում.

16) մասնակցություն ռազմական դրության ժամանակ ինժեներական հետախուզության կազմակերպմանը և համակարգմանը.

17) վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման, կենսաապահովման պլանների մշակման և դրանց ճշգրտման հսկողության սահմանում.

18) մասնակցություն բնակչության տարահանման կազմակերպմանն ու համակարգմանը.

19) մասնակցություն Վարչության անձնակազմի մասնագիտական պատրաստության անցկացմանը, Բաժնի անձնակազմի ինքնուրույն պատրաստության կազմակերպմանը և անցկացմանը.

20) Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

21. Քաղաքացիական պաշտպանության հարցերով կառավարման մարմինների գործունեության համակարգման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման գործընթացների կանոնակարգումն ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

2) քաղաքացիական պաշտպանության հարցերով պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների իրազեկումը և տեղեկատվության միջոցառումների կազմակերպումը.

3) պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կայուն գործունեության ապահովմանն ուղղված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքներին մեթոդական օգնության ցուցաբերումը.

4) պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման գործընթացի պլանավորումը, կազմակերպումը և իրականացումը, ինչպես նաև վիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

5) քաղաքացիական պաշտպանության բնագավառում կառավարման մարմինների միջև փոխգործողությունների կազմակերպումը.

6) իր իրավասությունների սահմաններում քաղաքացիական պաշտպանության հարցերով պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին վերաբերվող իրավական ակտերի նախագծերի և դրանց վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին մասնակցությունը.

7) մասնակցություն Վարչության աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլանի մշակմանը.

8) պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման և ճշգրտման աշխատանքներին մեթոդական և գործնական օգնության ցուցաբերումը.

9) պետական, պետական կառավարման համակարգի մարմիններում անցկացվող ուսումնավարժությունների, շտաբային մարզումների պլանավորման, նախապատրաստման և անցկացման աշխատանքներին մեթոդական օգնության ցուցաբերումը.

10) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով պետական, պետական կառավարման համակարգի մարմինների աշխատողների ուսուցման կազմակերպմանը.

11) պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման աշխատանքների կազմակերպումը.

12) պետական, պետական կառավարման համակարգի ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով նախապատրաստումը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցությունը Եվրասիական տնտեսական միության, Անկախ պետությունների համագործակցության, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հետ ոլորտում տարվող աշխատանքներին.

14) մասնակցությունը փրկարարական ծառայողների ուսումնական, մասնագիտական ու մարտական պատրաստության գործընթացին.

15) Բաժնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրա կատարման ընթացքի մասին հաշվետվությունների ու վերլուծությունների մշակումը.

16) իր իրավասությանն առնչվող, Ծառայության գործունեությունը կանոնակարգող, իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, հանձնարարականների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը, ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը.

17) Բաժնի անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաների մշակումը և ժամանակին ճշգրտումը.

18) Բաժնի անձնակազմի պատրաստության պլանավորումը և իրականացումը.

19) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Բաժնի գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

20) քաղաքացիական պաշտպանության բնագավառը կարգավորող իրավական ակտերով, Նախարարության և Ծառայության կանոնադրություններով սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հրդեհաշիջման միջոցառումների և փրկարարական աշխատանքների իրականացում.

2) ականապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում (ականազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողության կազմակերպում.

3) ջրաղբյուների հայտնաբերում, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքների կատարում.

4) սակրավորական կանչերի սպասարկում.

5) պարեկապահակային ծառայության կազմակերպում ու իրականացում.

6) Կենտրոնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրանց կատարման ընթացքի մասին հաշվետվությունների ու վերլուծությունների մշակում.

7) Տնօրենի, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի և Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Հավելված 8
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-Ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Նախարարության Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է արտակարգ իրավիճակների բնագավառում հոգեբանական ծառայության կազմակերպմանն ուղղված գործառույթներ:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Բաժնին հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար), Նախարարության Ծառայության տնօրեն-Ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Բաժնի գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Բաժնի՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը.

3) ծառայողները փրկարարական ծառայողներ են:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի նպատակներն ու խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակների բնագավառում հոգեբանական ծառայության կազմակերպումն ու մատուցումը.

2) ահազանգողներին հոգեբանական խորհրդատվության և աջակցության ցուցաբերումը.

3) Ծառայություն ընդունվելու դիմած քաղաքացիների և փրկարարական ծառայողների հոգեբանական առանձնահատկությունների հետազոտումը.

4) Ծառայության աշխատակիցների հոգեբանական վերականգնմանն ուղղված գործընթացների իրականացումը:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում և սահմանում է արտակարգ իրավիճակներում հոգեբանական ծառայության կազմակերպման ուղղություններն ու առանձնահատկությունները, պլանավորում է հիմնախնդիրների լուծումը.

2) սահմանված կարգով սպասարկում է ահազանգերը, իրականացնում է հոգեբանական խորհրդատվություն՝ «911» հեռախոսահամարով ու «թեժ գծերով», ինչպես նաև հոգեբանական աջակցություն՝ արտակարգ դեպքի, պատահարի վայրում.

3) գրանցում է յուրաքանչյուր ահազանգողին վերաբերող տվյալներն ու տեղեկատվությունը, ապահովում՝ դրանց գաղտնիությունը.

4) կիրառում է մասնագիտական գիտելիքներ, կարողություններ հոգեբանական խորհրդատվության կարիք ունեցող մարդկանց հոգեվիճակը բարելավելու, կայունացնելու, հանդարտեցնելու, անցանկալի քայլերից, արարքներից զերծ պահելու, կանխելու ուղղությամբ.

5) արտակարգ դեպքի, պատահարի, արտակարգ իրավիճակի վայրում կազմակերպում և իրականացնում է հոգեբանական օգնության կարիք ունեցող մարդկանց հաշվառումը, դասակարգումը և աջակցության ցուցաբերումը՝ օգտագործելով մասնագիտացված տրանսպորտային միջոցները, տեղի հնարավորությունները, գույքն ու այլ միջոցները.

6) համագործակցում է հոգեբանական ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) հետ արտակարգ դեպքի, պատահարի, արտակարգ իրավիճակի վայրում հոգեբանական տևական օգնության կարիք ունեցող մարդկանց վերականգնման, նեղ մասնագիտական հոգեբանական օգնության ցուցաբերման գործում.

7) խորհրդատվություն տրամադրողի և ահազանգողի համատեղ ցանկությամբ հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն է ցուցաբերում Նախարարության լիազոր ստորաբաժանման տարածքում.

8) մշակում է թեստեր, հարցաշարեր ու այլ ձևայնացված փաստաթղթեր՝ Ծառայություն ընդունվելու դիմած քաղաքացիների, փրկարարական ծառայողների հոգեբանական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով.

9) սահմանված պարբերականությամբ կազմակերպում և անցկացնում է Ծառայություն ընդունվելու դիմած քաղաքացիների, փրկարարական ծառայողների անհատական և խմբային թեստավորում և հարցազրույցներ՝ կիրառելով համապատասխան դիագնոստիկ սարքավորումներ.

10) կազմում և վերլուծում է քաղաքացիներին և փրկարարական ծառայողներին տրված բնութագրերն ու եզրակացությունները, սարքավորումների արձանագրած տվյալներն ու ցուցանիշները, դրանց հիման վրա ստեղծում՝ շտեմարաններ.

11) կազմում է Ծառայության ստորաբաժանումների անձնակազմի դիագնոստիկ և վերականգնողական աշխատանքների պլան-ժամանակացույց, ապահովում՝ դրա ժամանակին կատարումը.

12) հետազոտում և բացահայտում է փրկարարների մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում առկա կամ առաջացող հոգեբանական արտաքին կամ ներքին խոցող գործոնները, ծանրաբեռնվածությունը, դասակարգում դրանք, ներկայացնում առաջարկություններ՝ այդ գործոնների ազդեցությունը նվազեցնելու կամ մեղմացնելու ուղղությամբ.

13) ձևավորում է համապատասխան մասնագիտական աշխատանքային խմբեր՝ տարածքային ստորաբաժանումների անձնակազմի հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները և վերականգնողական աշխատանքները տեղում իրականացնելու համար.

14) առաջարկություններ է ներկայացնում արտակարգ իրավիճակների բնագավառում հոգեբանական ծառայության ամրապնդման և զարգացման ուղղությամբ.

15) կազմակերպում է ահազանգերի սպասարկման և արձագանքման, դիագնոստիկայի, վերականգնման գործընթացներում ներգրավված անձնակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացմանն ուղղված ուսումնամեթոդական գործունեություն.

16) իր լիազորությունների շրջանակներում համակարգում է արտակարգ իրավիճակների բնագավառում հոգեբանական ծառայությանն առնչվող գործընթացներն ու տեղեկատվության ապահովումը.

17) կազմում է հաշվետվություններ, ուսումնասիրման և հետազոտությունների եզրահանգումներ՝ ներկայացնելով դրանք շահագրգիռ ստորաբաժանումներին, ծառայություններին, կազմակերպություններին և լրատվամիջոցներին.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փորձի և տեղեկատվության փոխանակում՝ հոգեբանական ծառայություններ մատուցող հաստատությունների, կազմակերպությունների հետ՝ ուղղված շտեմարանների արդիականացմանը, հոգեբանական բնագավառում մասնագետների միասնական բազայի ստեղծմանը.

19) առաջարկություններ է ներկայացնում մասնագիտական սարքավորումների ձեռքբերման, նպատակային կիրառման, ինչպես նաև համապատասխան տարածքների կահավորման, հոգեբանական վերականգնման գործընթացն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ.

20) իր գործունեության տիրույթում համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում կոնֆերանսներին (տեսակոնֆերանսներին), սեմինարներին, գիտաժողովներին՝ առավելագույնս կիրառելով հաջողված միջազգային փորձն ու ձեռքբերումները:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Բաժինը կառավարում է Տնօրենը:

8. Բաժնի աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Բաժնի գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը:

11. Բաժնի պետը ղեկավարում է Բաժնի ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Բաժնի անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Բաժնի անձնակազմն անմիջականորեն ենթակա է Բաժնի պետին:

13. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի առջև դրված խնդիրների և Բաժնին վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Բաժնի պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Բաժնի գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Բաժնի ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են համապատասխան պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

Հավելված N 9
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Երևան քաղաքի փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում Երևան քաղաքի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար) և Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը Երևան քաղաքի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի և առողջության փրկումն ու պահպանումը.

3) մասնակցությունը Երևան քաղաքի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

4) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

5) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

6) արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների արձագանքումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների, կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանը և այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունն արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակման ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունն արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով Երևան քաղաքի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում Երևան քաղաքի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) Երևան քաղաքի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) Երևան քաղաքի տարածքում ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում՝ հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է Երևան քաղաքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ և ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ՝ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայություններին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչություններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է Երևանի քաղաքապետարանի և կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) Երևանի քաղաքապետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ Երևան քաղաքի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է Երևան քաղաքի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում Երևանի քաղաքապետարանի ղեկավար կազմի և շահագրգիռ ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է Երևան քաղաքում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է Երևան քաղաքի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է Երևանի քաղաքապետարանի, կազմակերպությունների հակահրդեհային ծառայություններում առկա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է Երևան քաղաքում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու Երևանի քաղաքապետին է ներկայացնում առաջարկություններ նյութատեխնիկական և ֆինանսական ապահովման հարցերի վերաբերյալ.

17) մասնակցում է հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների և փրկարարական կազմավորումների ատեստավորման կազմակերպմանը և անցկացմանը.

18) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, Երևանի քաղաքապետարանի, կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ուսուցումը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

19) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում Երևան քաղաքի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության

ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

20) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով սահմանված կարգով ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն՝ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայություններից, Երևանի քաղաքապետարանից ու կազմակերպություններից.

21) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի ու պլանների մշակմանը.

22) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի հիմնմանը.

23) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ու շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

24) կազմակերպում է Երևան քաղաքի բնակչության ազդարարումը՝ Երևանի տարածքում գործող կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

25) իրականացնում է Երևան քաղաքում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումը և տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) իրականացնում է Երևան քաղաքի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

28) իր իրավասության սահմաններում մասնակցում է Երևան քաղաքի կառուցապատման գլխավոր հատակագծի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ Երևան քաղաքի բնակչությանը պաշտպանական կառույցներով և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

29) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում զինկոմիսարիատների հետ՝ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

30) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

31) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

32) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

33) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

34) Նախարարի, Տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

35) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության ու սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

8. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

9. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

10. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

11. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալները և Վարչության ստորաբաժանումների պետերը:

12. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

13. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

14. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

15. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի՝ առավել երկար ստաժ ունեցող տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

17. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

18. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Բնակչության պաշտպանության բաժին.

2) Քաղաքացիական պաշտպանության բաժին.

3) Ճգնաժամային կառավարման բաժին.

4) Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժին.

5) Կարևորագույն օբյեկտների պահպանության բաժին.

6) թիվ 1 հրշեջ-փրկարարական ջոկատ.

7) թիվ 2 հրշեջ-փրկարարական ջոկատ.

8) թիվ 3 հրշեջ-փրկարարական ջոկատ.

9) թիվ 4 հրշեջ-փրկարարական ջոկատ.

10) թիվ 5 հրշեջ-փրկարարական ջոկատ.

11) թիվ 6 հրշեջ-փրկարարական ջոկատ.

12) թիվ 7 հրշեջ-փրկարարական ջոկատ.

13) թիվ 8 հրշեջ-փրկարարական ջոկատ.

14) թիվ 9 հրշեջ-փրկարարական ջոկատ.

15) թիվ 10 հրշեջ-փրկարարական ջոկատ.

16) թիվ 11 հրշեջ-փրկարարական ջոկատ.

17) «Նաիրիտ գործարան» փակ բաժնետիրական ընկերության N թիվ 12 հրշեջ-փրկարարական ջոկատ.

18) թիվ 13 հրշեջ-փրկարարական ջոկատ:

19. Վարչության բնակչության պաշտպանության բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մասնակցում է Ծառայության տարվա հիմնական միջոցառումների պլանի նախագծի, Երևան քաղաքի՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգի նախապատրաստման հիմնական միջոցառումների՝ հաջորդ տարվա պլանի նախագծի մշակման աշխատանքներին.

2) մասնակցում է Ծառայության տարվա աշխատանքային պլանի նախագծի, Վարչության տարվա աշխատանքային պլանի նախագծի մշակման աշխատանքներին.

3) մասնակցում է Ծառայության ամսվա աշխատանքային պլանի նախագծի, Վարչության ամսվա աշխատանքային պլանի նախագծի մշակման աշխատանքներին.

4) մշակում է Բաժնի ամսական և տարեկան աշխատանքային պլանները և ներկայացնում՝ հաստատման.

5) մասնակցում է շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարվա ընթացքում Վարչության կողմից կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության կազմմանը.

6) մշակում է Բաժնի կողմից շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարվա ընթացքում կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

7) մշակում է արտակարգ իրավիճակներում Երևան քաղաքի բնակչության պաշտպանության և Երևան քաղաքի սեյսմիկ ռիսկերի կառավարման պլանները.

8) մեթոդական օգնություն է ցուցաբերում Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովի տարեկան աշխատանքային միջոցառումների պլանների մշակման և ճշգրտման ուղղությամբ.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում կազմակերպություններին ԱԻ պլանների և պլան-ժամանակացույցերի մշակման և ճշգրտման ուղղությամբ.

10) մասնակցում է տեխնածին արտակարգ իրավիճակների և տարերային վտանգավոր երևույթներից հասցված վնասի չափի գնահատման աշխատանքներին.

11) իրականացնում է թունավորումների դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծման և ամփոփման աշխատանքներ.

12) մասնակցում է Վարչության կողմից անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերի նախապատրաստմանը և անցկացմանը.

13) մեթոդական օգնություն է ցուցաբերում Երևան քաղաքի վարչական շրջաններում և կազմկերպություններում բնակչության պաշտպանության թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերի մշակմանը և անցկացմանը.

14) մշակում է Վարչության կողմից բնակչության պաշտպանության թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերը և մասնակցում դրանց անցկացմանը.

15) համագործակցում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ.

16) կազմակերպում և իրականացնում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների, կազմակերպությունների ղեկավար կազմի մասնագիտական պատրաստության պարապմունքները, բնակչության ուսուցումը, ինչպես նաև ոլորտի պատասխանատուների վերապատրաստումը ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում.

17) իրականացնում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի վերաբերյալ քիմիապես վտանգավոր օբյեկտների հետ առկա ուժեղ ներգործող թունավոր նյութերի վերաբերյալ տեղեկատվության ստացման և անվտանգության վկայագրում ընդգրկված միջոցառումների կատարման աշխատանքներ.

18) իրականացնում է ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեություն, պարբերաբար ճշգրտում է համակարգում գործող կազմակերպությունների մասին տվյալները, անհրաժեշտության դեպքում ներկայացնում առաջարկություններ՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

19) մասնակցում է Երևան քաղաքում տեղի ունեցած վտանգավոր բնական երևույթների և տարերային աղետների, դրանց հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքներին.

20) կազմակերպում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումներ, այդ թվում՝ հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից Երևան քաղաքը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով և ներկայացնում տեղեկատվություն.

21) իրականացնում է էլեկտրահաղորդման ցանցերի և գծերի, գազամատակարարման գծերի և օբյեկտների, առկա ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրային ցանցերի և կառուցվածքների, Երևան քաղաքում գտնվող ջրամբարների, ավտոմիբիլային ճանապարհների և շենք-շինությունների վերաբերյալ տվյալների ճշգրտում.

22) մշակում է բնակչության պաշտպանության բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերը.

23) մասնակցում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներին.

24) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցմանն առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

25) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից,

կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

26) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ Երևան քաղաքի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

27) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

28) իր իրավասության շրջանակներում Երևան քաղաքի հանձնաժողովի կազմում մասնակցում է Երևան քաղաքի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

29) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի՝ Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

30) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

31) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համակարգում է Երևան քաղաքի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեությունը.

32) մասնակցում է Երևան քաղաքի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

33) իրականացնում է Երևան քաղաքի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

34) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Վարչության քաղաքացիական պաշտպանության բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մասնակցում է Ծառայության տարվա հիմնական միջոցառումների պլանի նախագծի, Երևան քաղաքի՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգի նախապատրաստման հիմնական միջոցառումների՝ հաջորդ տարվա պլանի նախագծի մշակման աշխատանքներին

2) մասնակցում է Ծառայության տարվա աշխատանքային պլանի նախագծի, Վարչության տարվա աշխատանքային պլանի նախագծի մշակման աշխատանքներին

3) մասնակցում է Ծառայության ամսվա աշխատանքային պլանի նախագծի, Վարչության ամսվա աշխատանքային պլանի նախագծի մշակման աշխատանքներին.

4) մշակում է Բաժնի ամսական և տարեկան աշխատանքային պլանները և ներկայացնում՝ հաստատման.

5) մասնակցում է շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարվա ընթացքում Վարչության կողմից կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության կազմմանը.

6) մշակում է Բաժնի կողմից շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարվա ընթացքում կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

7) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

8) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ Երևան քաղաքի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

9) կազմակերպում է բնակչության պատսպարման միջոցառումների պլանավորումը, մեթոդական օգնություն ցուցաբերում բնակչության կցագրմանը և իրականացնում պաշտպանական կառույցների ուսումնասիրություններ.

10) կազմակերպում է բնակչության տարահանման միջոցառումների պլանավորումը, մեթոդական օգնություն ցուցաբերում բնակչության կցագրմանը և իրականացնում տարահանման մարմինների ճշգրտում.

11) կազմակերպում է գործունեության կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումը, մեթոդական օգնություն է ցուցաբերում Երևանի քաղաքապետարանին ու համապատասխան կազմակերպություններին.

12) կազմակերպում և իրականացնում է Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) ծառայությունների և կազմակերպությունների շտաբի պետերի մասնագիտական պատրաստության պարապմունքները, բնակչության ուսուցումը, ինչպես նաև ոլորտի պատասխանատուների վերապատրաստումը ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում.

13) մշակում է Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության և Երևան քաղաքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանները.

14) իրականացնում է Վարչության զորահավաքային և մարտական պատրաստության միջոցառումները.

15) մշակում է Խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, ՀՀ ԶՈՒ Երևանի կայազորի և Երևանի ՏԶԿ-ների հետ փոխհամագործակցության պլանները.

16) մեթոդական օգնություն է ցուցաբերում Երևան քաղաքի ՔՊ ծառայությունների ՔՊ պլանների, տարեկան աշխատանքային միջոցառումների պլանների մշակմանը և ճշգրտմանը.

17) մեթոդական օգնություն է ցուցաբերում կազմակերպություններին՝ ՔՊ պլանների և պլան-ժամանակացույցերի մշակման ճշգրտման ուղղությամբ.

18) իրականացնում է Երևանի ՔՊ ծառայությունների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, դրանց անձնակազմի թվաքանակի, հագեցվածության վերաբերյալ և կազմակերպություններում առկա ՔՊ գույքի, անհատական պաշտպանության միջոցների, ճառագայթային և քիմիական հետախուզության սարքերի տվյալների ճշգրտման աշխատանքներ.

19) իրականացնում է Երևան քաղաքում և կազմակերպություններում առկա ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալների ճշգրտման աշխատանքները.

20) իրականացնում է բնակչության ազդարարման սարքավորումների առկայության ու սարքինության վերաբերյալ տվյալների ճշգրտման աշխատանքները.

21) մշակում է քաղաքացիական պաշտպանության բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերը.

22) մասնակցում է Ծառայության հիմնական միջոցառումների պլանի նախագծի մշակման աշխատանքներին.

23) մասնակցում է Վարչության կողմից անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերի նախապատրաստմանը և անցկացմանը.

24) մեթոդական օգնություն է ցուցաբերում վարչական շրջաններում և կազմկերպություններում ՔՊ թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերի մշակմանը և անցկացմանը.

25) մշակում է Վարչության կողմից ՔՊ թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերը և մասնակցում դրանց անցկացմանը.

26) համագործակցում է պետական կառավարման մարմինների տարածքային ծառայությունների, Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների և կազմակերպությունների հետ ու ստանում անհրաժեշտ տեղեկատվություն.

27) իր իրավասության շրջանակներում մասնակցում է քաղաքացիական պաշտպանության բնագավառի՝ Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

28) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

21. Վարչության ճգնաժամային կառավարման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մասնակցում է Երևան քաղաքի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

2) ամենօրյա հսկողություն է իրականացնում Երևան քաղաքի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

3) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

4) մշակում և պարբերաբար ճշգրտում է Երևան քաղաքի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

5) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

6) արտակարգ իրավիճակների դեպքում վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

7) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառում-ների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է Երևան քաղաքի ղեկավար կազմի ու բնակչության ազդարարումը.

8) իրականացնում է Երևան քաղաքի հերթապահ ծառայություններից, կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված ահազանգերի և տեղեկատվության ընդունում, գրանցում, վերլուծում, գնահատում, ամփոփում ու զեկուցում Վարչության պետին, ինչպես նաև Ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ հերթափոխի պետին ու փոխանցում այլ շահագրգիռ մարմիններ.

9) համակարգում է օպերատիվ հերթապահության իրականացման ընթացքը և արտակարգ իրավիճակների սպառնալիքի ու (կամ) առաջացման ժամանակ ցուցաբերում անհրաժեշտ աջակցություն.

10) իրականացնում է Երևան քաղաքի էներգետիկ ցանցերում, կոմունալ-կենցաղային համակարգում տեղի ունեցած վթարների և դրանց հետևանքների վերացման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ընդունում և տրամադրում Վարչությանը.

11) կապի կազմակերպում Վարչության բաժինների հետ և պարբերական ստուգումների իրականացնում.

12) սահմանված կարգով իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգերի սպասարկում.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

14) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում և պարբերաբար թարմացում.

15) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

16) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

17) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության ու սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Վարչության հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով հաստատման է ներկայացնում հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների գործունեության համակարգմանն ուղղված հրամանի նախագծեր.

2) մասնակցում է Ծառայության տարվա հիմնական միջոցառումների պլանի նախագծի, Երևան քաղաքի՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության

և քաղաքացիական պաշտպանության համակարգի նախապատրաստման հիմնական միջոցառումների՝ հաջորդ տարվա պլանի նախագծի մշակման աշխատանքներին.

3) մասնակցում է Ծառայության տարվա և ամսվա աշխատանքային պլանների նախագծերի մշակման աշխատանքներին.

4) իրականացնում է Բաժնի ամսական և տարեկան աշխատանքային պլանների մշակումը և ներկայացումը՝ Վարչության պետի հաստատմանը.

5) մասնակցում է շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարվա ընթացքում Վարչության կողմից կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության կազմմանը.

6) կազմակերպում է շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարվա ընթացքում Բաժնի կողմից կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակումը և ներկայացումը՝ Վարչության պետին.

7) իրականացնում է հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի, հրշեջ-փրկարարական ջոկատների տեխնիկայի և ավտոտրանսպորտային այլ միջոցների շարժի, վառելիքաքսուքային և հրդեհաշիջման նյութերի ծախսային հաշվարկների վերաբերյալ հաշվետվությունները.

8) մասնակցում է Վարչության կողմից անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերի նախապատրաստմանը և անցկացմանը.

9) իրականացնում է Երևանի քաղաքապետարանի, կազմակերպությունների հակահրդեհային ծառայություններում առկա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը՝ փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է Երևան քաղաքում հասարակական հրշեջ և փրկարար ուժերի ստեղծմանը, գործունեության հարցերով մեթոդական օգնության ցուցաբերմանը և համակարգում դրանց գործունեությունը.

11) վերահսկում է հրշեջ-փրկարարական ջոկատների մարտական և ծառայողական պատրաստության պարապմունքները.

12) ապահովում է Բաժնի մարտունակության, մասնագիտական կարողությունների և հմտությունների մշտական կատարելագործումն ու կիրառումը՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում, արտակարգ դեպքերի, պատահարների սպասարկման, հետախուզության իրականացման, իրավիճակի գնահատման, որոշումների կայացման, արտակարգ իրավիճակ, արտակարգ դեպք, պատահար առաջացնող աղբյուրի և (կամ) հետևանքների վերացման գործընթացների ղեկավարման ժամանակ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում օպերատիվ արձագանքումն ու դեպքի վայրում ստեղծված իրավիճակի՝ հնարավորինս սեղմ ժամկետներում գնահատումը.

14) իր իրավասության սահմաններում, դեպքի վայրում ստեղծված իրավիճակին համարժեք, ընդունում է որոշումներ.

15) իր իրավասության սահմաններում կառավարում է արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների առաջացման (սպառնալիքի) աղբյուրների, ինչպես նաև հնարավոր հետևանքների վերացման (նվազեցման) գործընթացները.

16) իրականացնում է դեպքի վայրից տեղեկատվության ժամանակին տրամադրումը՝ ըստ շահագրգիռ ուղղությունների.

17) կազմակերպում է դեպքի վայրում Ծառայության ստորաբաժանումների փոխգործողությունները և փոխհամագործակցությունը.

18) լուսանկարահանում և տեսանկարահանում է դեպքի վայրում իրականացվող գործողությունները, արտակարգ դեպքերն ու պատահարները՝ ուսումնական, հետազոտական և այլ նպատակներով.

19) մասնակցում է աղետի գոտում փրկարարական, վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների իրականացմանը՝ ընդգրկելով անհրաժեշտ փրկարար ուժեր և համակարգում նրանց գործունեությունը.

20) իրականացնում է հերթապահ խմբերի ծառայության կրման ընթացքի ստուգումներ՝ ցերեկային և գիշերային ժամերին.

21) վերահսկում է օբյեկտների հրդեհաշիջման օպերատիվ պլանների և քարտերի մշակումը.

22) իր իրավասության սահմաններում անցկացնում է հրշեջ տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում՝ ներգրավելով առկա տեխնիկան.

23) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության ու Վարչության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

23. Վարչության կարևորագույն օբյեկտների պահպանության բաժինը՝ Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իր կողմից պահպանվող կարևորագույն օբյեկտներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հսկողության իրականացում՝ հակահրդեհային կենսակարգի միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ.

2) հսկողության իրականացում՝ կրակային և այլ հրդեհավտանգ աշխատանքների հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ.

3) հակահրդեհային կենսակարգի վիճակի ուսումնասիրում և առաջարկությունների ներկայացում՝ վիճակի բարելավման ուղղությամբ.

4) հսկողության իրականացում՝ հրդեհների հայտնաբերման և մարման ինքնաշխատ համակարգերը շահագործող և սպասարկող անձնակազմի գործունեության նկատմամբ.

5) օբյեկտի ինժեներական անձնակազմի հետ համատեղ հրդեհային անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, աշխատակիցների հետ հակահրդեհային հրահանգավորման անցկացում.

6) հակահրդեհային քարոզչության անցկացում.

7) հակահրդեհային ջրամատակարարման, կապի միջոցների, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերի ու սարքավորումների վերազինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում օբյեկտի ղեկավարության քննարկմանը.

8) ծառայության կրման ընթացքի և ծառայողների մասնագիտական գիտելիքների պարբերաբար ստուգումների անցկացում.

9) առաջարկությունների ներկայացում ՀՀ կարևորագույն օբյեկտների ցանկը սահմանելու ուղղությամբ.

10) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

24. Վարչության ջոկատները, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում են հետևյալ գործառույթները՝

1) մասնակցում են Վարչության կողմից անցկացվող ուսումնավարժությունների փաստաթղթերի նախապատրաստմանը և անցկացմանը.

2) անցկացնում են ջոկատների կողմից անցկացվող ուսումնավարժություններ՝ հրշեջ մարտավարական վարժանքներ.

3) սպասարկման տարածքում իրականացնում են հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

4) ընդունում են հրդեհների և այլ արտակարգ դեպքերի վերաբերյալ հաղորդագրություններ ու արձագանքում դրանց.

5) կազմում են հրդեհաշիջման օպերատիվ պլաններ և քարտեր.

6) սահմանված կարգով մասնակցում են սպասարկման տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

7) դեպքի վայրում իրականացնում են տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխելու աշխատանքներ.

8) իրականացնում են հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

9) անցկացնում են հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

10) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում են հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

11) բնակչության պաշտպանության հարցերով համագործակցում են Երևան քաղաքի վարչական շրջանների հետ.

12) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության ու սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում են այլ աշխատանքներ:

25. Վարչության «Նաիրիտ գործարան» փակ բաժնետիրական ընկերության թիվ 12 ջոկատը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, օբյեկտի տարածքում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) արտակարգ իրավիճակների ժամանակ իրականացնում է հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքներ.

2) հրդեհի ծագման դեպքում կազմակերպում և ղեկավարում է հրդեհաշիջման աշխատանքները.

3) պարբերաբար ուսումնասիրում է օբյեկտում առկա հրդեհաշիջման սկզբնական միջոցների անհրաժեշտ քանակությունը և հակահրդեհային ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակը.

4) անցկացնում է հրշեջ տակտիկական գիշերային և ցերեկային վարժանքներ՝ ներգրավելով ջոկատում առկա հրշեջ տեխնիկան.

5) հրդեհային անվտանգության ապահովման նպատակով փոխհամագործակցում է օբյեկտի ղեկավարության, անվտանգության բաժնի և մյուս շահագրգիռ ծառայությունների հետ.

6) օբյեկտի ինժեներական անձնակազմի հետ համատեղ իրականացնում է օբյեկտի հրդեհային անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, կազմակերպում աշխատակիցների հակահրդեհային հրահանգավորում.

7) պարբերաբար ուսումնասիրում է օբյեկտի համապատասխանությունը հրդեհային անվտանգության նորմերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ցուցաբերում է մեթոդական օգնություն՝ բացահայտված խախտումների վերացման հարցերում.

8) ապահովում է հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման գործընթացը՝ արտադրամասերի, տեղամասերի, սարքավորումների, շինարարության, վերանորոգման և կրակային աշխատանքների կատարման ընթացքում.

9) կազմակերպում է օբյեկտի հրդեհային անվտանգության վերաբերյալ ղեկավար մարմինների որոշումների, կարգադրությունների ու ցուցումների իրականացմանն ուղղված աշխատանքները.

10) օբյեկտի ղեկավարության քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ՝ հակահրդեհային ջրամատակարարման, կապի միջոցների, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերի ու սարքավորուների վերազինման վերաբերյալ.

11) Տնօրենի, Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ

12) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության ու սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

Հավելված N 10
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման

տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Աշտարակի ջոկատ.

2) Ապարանի ջոկատ.

3) Արագածի ջոկատ.

4) Թալինի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված N 11
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Արարատի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանմված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատ.

2) Արարատի հրշեջ-փրկարարական ջոկատ.

3) Մասիսի հրշեջ-փրկարարական ջոկատ.

4) Վեդու հրշեջ-փրկարարական ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության տարեկան, ամսական և ճգնաժամային կառավարման կենտրոնի ամսական աշխատանքային պլանները.

5) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

6) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

7) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

8) կազմակերպում է փրկարարական ծառայողների մասնագիտական պատրաստության պարապմունքների անցկացումը.

9) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

10) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

12) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

13) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

14) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

15) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

16) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

17) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

18) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

19) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

20) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

21) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

22) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

23) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

24) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

25) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

26) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

27) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

28) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

29) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

30) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

18) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

19) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

20) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

21) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) անհրաժեշտության դեպքում, հսկողություն է սահմանում սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ուղղությամբ:

8) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

9) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

10) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 12
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Արմավիրի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանմված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Արմավիրի ջոկատ.

1) Բաղրամյանի ջոկատ.

2) Վաղարշապատի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 13
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության

կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանմված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների, հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) և հատուկ ջրափրկարարական ջոկատի միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Հատուկ ջրափրկարարական ջոկատ.

2) Գավառի ջոկատ.

4) Սևանի ջոկատ.

5) Մարտունու ջոկատ.

6) Վարդենիսի ջոկատ.

7) Ճամբարակի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ՝ իր սպասարկման տակ գտնվող ջրային տարածքների.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

23. Հատուկ ջրափրկարարական ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է ջրափրկարարական և որոնողական բնույթի աշխատանքներ.

2) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

3) իր սպասարկման տակ գտնվող ջրային տարածքների՝ լողալու համար չնախատեսված վայրերում տեղադրում է արգելող նշաններ,

4) ձեռնարկում է անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված համապատասխան միջոցառումներ՝ այդ թվում, բնակչությանը իրազեկելու միջոցով.

5) իրականացնում է ջրափրկարարական գույքի և համապատասխան տեխնիկական միջոցների սարքինության պահպանմանն ուղղված համապատասխան միջոցառումներ.

6) Տնօրենի (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի) և Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացում է այլ գործառույթներ:

Հավելված N 14
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Վանաձորի՝

ա. թիվ 1 ջոկատ,

բ. թիվ 2 ջոկատ.

2) Գուգարքի ջոկատ.

3) Թումանյանի ջոկատ.

4) Ստեփանավանի ջոկատ.

5) Սպիտակի ջոկատ.

6) Տաշիրի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի

ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների,

կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգել-ման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 15
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման

տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) «Հրազդան ՋԷԿ»-ի ջոկատ.

2) Հրազդանի ջոկատ.

3) Աբովյանի ջոկատ.

4) Եղվարդի ջոկատ.

5) Չարենցավանի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 16
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Շիրակի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման

տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Գյումրու՝

ա. թիվ 1 ջոկատ,

բ. թիվ 2 ջոկատ.

4) Արթիկի ջոկատ.

5) Ամասիայի ջոկատ.

6) Անիի ջոկատ.

7) Աշոցքի ջոկատ.

8) Ախուրյանի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 17
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման

տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).
2) Բնակչության պաշտպանության բաժին.
3) Կապանի ջոկատ.
4) Գորիսի ջոկատ.
5) Մեղրու ջոկատ.
6) Սիսիանի ջոկատ.
7) Քաջարանի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.
2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.
3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.
4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.
5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.
6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.
7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.
8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.
9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 18
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանմված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման

տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

4) Եղեգնաձորի ջոկատ.

5) Ջերմուկի ջոկատ.

6) Վայքի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված N 19
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Տավուշի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի գործառույթներ:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրություններով:

3. Վարչությանը հանձնարարականներ և հրամաններ տալիս են ՀՀ ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարարը), Ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Տնօրեն) և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

4. Վարչության՝

1) կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը.

2) կանոնադրությունը հաստատում է Տնօրենը:

5. Վարչության ծառայողները փրկարարական ծառայողներ, քաղաքացիական ծառայողներ և տեխնիկական սպասարկողներ են:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակները և խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացմանը.

2) մասնակցությունը մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանն ու պատրաստության ապահովմանն ուղղված գործընթացներին.

3) մարզի տարածքում փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

4) Վարչության ստորաբաժանումների կայուն կառավարման ապահովումը.

5) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարկան և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

6) մարզի տարածքում արտակարգ իրավիճակների վերաբերյալ ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Վարչության ստորաբաժանումներին՝ իրավասու պաշտոնատար անձանց հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների, համապատասխան ցուցումների փոխանցումը.

8) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործունեությունը չդադարեցնող կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ազդարարման կազմակերպումն ու իրականացումը.

9) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային և մարզային մակարդակում համապատասխան ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգմանը, կազմակերպմանն ու այդ հարցերի վերաբերյալ իրազեկմանը.

10) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակմանն ու դրանց կատարման ապահովմանը և վերահսկմանը.

11) մասնակցությունը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը և օգտագործման նպատակային ապահովմանը.

12) մասնակցությունն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող հիմնահարցերով մարզի ղեկավար կազմի և բնակչության ուսուցման կազմակերպմանը.

13) մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ կանխարգելիչ, ինչպես նաև հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) արտակարգ իրավիճակներում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի գործունեության համակարգումը.

15) մարզի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների հաշվառումն ու դրանց պահպանության վիճակի պարբերաբար ուսումնասիրումը.

16) մարզի տարածքում գտնվող ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերի հաշվառումն ու տվյալների բազայի ստեղծումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծեր և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

2) իր իրավասության սահմաններում մշակում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրեր.

3) իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

4) իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

5) իր իրավասության սահմաններում կազմակերպում և համակարգում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի իրականացումը.

6) մարզպետին առաջարկություններ է ներկայացնում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

7) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

8) կազմակերպում և իրականացնում է որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

9) հսկում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

10) իրականացնում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքը և վերլուծությունը.

11) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

12) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումը.

13) իր իրավասության շրջանակներում հաշվառում ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

14) համակարգում է մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

15) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

16) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակում և Տնօրենին ու մարզպետին է ներկայացնում առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

17) կազմակերպում և իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

18) իր իրավասության սահմաններում աշխատանքներ է իրականացնում մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

19) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

20) մասնակցում է քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

21) մասնակցում է բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

22) իրականացնում է Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

23) կազմակերպում է մարզի բնակչության ազդարարման իրականացումը մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով.

24) իրականացնում է մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

25) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

26) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

27) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

28) ռազմական դրության ժամանակ աշխատանքներ է տանում մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

29) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

30) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

31) տիրապետում և օգտագործում է Վարչությանը հանձնված պետական գույքը.

32) մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը.

33) Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

34) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տնօրենը:

9. Վարչության աշխատանքների համակարգումն իրականացնում է Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալը:

10. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը:

11. Վարչության պետը ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ, ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը:

12. Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և Վարչության ստորաբաժանումների պետերը:

13. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

14. Վարչության պետը հաշվետու է Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին:

15. Վարչության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման

տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

16. Վարչության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ կապված աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության պետի տեղակալը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

18. Վարչության աշխատանքները կազմակերպվում են բաժինների և հրշեջ-փրկարարական ջոկատների (այսուհետ՝ ջոկատ) միջոցով:

19. Վարչությունն ունի հետևյալ ստորաբաժանումները՝

1) Ճգնաժամային կառավարման կենտրոն (բաժին).

2) Բնակչության պաշտպանության բաժին.

3) Իջևանի ջոկատ.

4) Դիլիջանի ջոկատ.

5) Նոյեմբերյանի ջոկատ.

6) Տաուշի ջոկատ:

20. Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության սահմաններում մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մշակում է օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

3) իրականացնում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու հսկողություն սահմանում դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

4) մշակում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.

5) մշակում է մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը.

6) կազմակերպում է ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

7) կազմակերպում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

8) մշակում և պարբերաբար ճշգրտում է մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

9) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

11) սահմանված կարգով արձագանքում է գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ իրականացնում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից տեղեկատվության հավաք, ամփոփում, վերլուծում և ներկայացնում առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունում է համապատասխան որոշումներ.

13) իրականացնում է արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և պարբերաբար թարմացումը.

14) իրականացնում է մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

15) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

16) իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառում ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

17) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպում և իրականացնում է հետախուզություն, ինչպես նաև ամփոփում, վերլուծում է հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

18) իր իրավասության սահմաններում իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

19) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

20) սահմանված կարգով բնակչությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

21) իրականացնում է արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

22) իրականացնում է տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումն ու դրանց արդիականացումը.

23) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

24) մոդելավորում է տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

25) կազմակերպում և ձեռք է բերում (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

26) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

27) ապահովում է դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

28) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

29) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

21. Վարչության բնակչության պաշտպանության բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասության շրջանակներում մշակում ու սահմանված կարգով Վարչության պետին է ներկայացնում բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված մարզպետի որոշումների, կարգադրությունների և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) Վարչության պետին առաջարկություն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

3) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն՝ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում.

4) մասնակցում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից մշակվող ու իրականացվող արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերին.

5) մշակում է առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ.

6) մարզային հանձնաժողովի կազմում մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքներին.

7) իր իրավասության շրջանակներում մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը.

8) ամենօրյա հսկողություն է իրականացնում մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրադրության ուղղությամբ.

9) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծմանը.

10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնապահպանության բնագավառի վերաբերյալ հայեցակարգերի առաջարկությունների մշակմանը.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում պաշտպանական շինությունների կառուցման նպատակային ծրագրերի մշակմանը՝ քաղաքացիական պաշտպանության մասով.

12) մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման պետական ծրագրերի մշակմանը.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

14) մասնակցում է մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ընթացքում հսկողության իրականացմանը.

15) իրականացնում է մարզի տարածքում գտնվող վտանգավոր օբյեկտների, օգտագործվող ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի հաշվառում, անվտանգության վկայագրերում նշված միջոցառումների կատարման նկատմամբ սահմանում է հսկողություն.

16) իրականացնում է մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, առաջին կանչի ուժերի, փրկարարական կազմավորումների հաշվառում.

17) մասնակցում է զինկոմիսարիատի հետ պատերազմի ժամանակ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցմանն ու քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակմանը.

18) մշակում է բնակչության պաշտպանության բաժնի ամսական պլանները և հաշվետվությունները.

19) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է բնակչության պաշտպանության բաժնին հանձնված պետական գույքը.

20) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ աշխատանքներ:

22. Ջոկատը, վարչության նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) իրականացնում է հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.

5) անցկացնում է հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում.

6) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

7) հսկում է սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

8) իրականացնում է սպասարկման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

9) իրականացնում է այլ գործառույթներ: